



Ինքան Ավագյան



# ՊԱՏՄԱԿԱՆ ԾԻՐԱԿԵ ՍԿԶԲՆԱԳՐՅՈՒԹԵՐՈՒՄ

Գյումրի  
ԷԼԴՈՐԱԴՈ  
2015

ISBN 978-9939-826-35-6

Ինգա Է. Ավագյան

# ՊԱՏՄԱԿԱՆ ՇԻՐԱԿԸ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՆԵՐՈՒՄ

Գյումրի  
ԷՂՋՈՐԴՈ  
2015

ԴՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

Ա 770

Երաշխավորված է հրատարակության 77 գԱԱ  
Ծիրակի հայագիտական հետազոտությունների  
կենտրոնի գիտական խորհրդի (9.03.2015թ.)

Գյումրու «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի որոշումներով

Գիտական խմբագիր՝  
պատմ. գիտ. թեկնածու, դրցենտ Արմեն Համայալյան

Գրախոսուներ՝ Ստեփան Տեր-Մարգարյան  
Պարույր Զաքարյան

Խմբագիր՝ Անահիտ Մկրտչյան

### Ավագյան Ինգա

Ա 770 ՊԱՏՄԱԿԱՆ ՇԻՐԱԿԸ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ/ Ի. Ավագյան. – Գյումրի:  
Ելորադո, 2015. – 78 էջ:

«Պատմական Ծիրակը սկզբնաղբյուրներում» համահավաքում մշակվել, պատմական փաստերի հետ համադրվել և գրքի տեսքով ընթերցողի սեղամին են դրվել Երիախի երկրի և հարևանների մասին վանտոսայան արձանագրություններում պահպանված գրավոր հիշատակությունները, որը անհրաժեշտ է Երիախի երկրի և քագակորության դերը Հյուսիսային համադաշնության և վանտոսայան մշակութային համակարգում (Թ.ա. VIII-VI դդ.) բացահայտելու համար: Նաև իիմ ու նոր տվյալների և աղբյուրների հիման վրա Երիախի երկիրը, նրա փոխարարերությունները հարևան երկրների, Հյուսիսային համադաշնության և Վանի թագավորության կենտրոնի հետ ներկայացնելու համար:

Վանտոսայան աղբյուրներն ունեն պատմական, փաստագրական, աղբյուրագիտական, հնագիտական արժեք: Գիրքը մեծապես արժեքավորվում է հեղինակի գիտական և մեկնարանություններով, պատմական քարտեզով, լուսանկարներով, արձանագրությունների յուրօրինակ ընթերցումներով:

Գիրքը հասցեագրվում է հայագիտությամբ զբաղվող գիտական հաստատություններին, հնագիտներին, պատմաբաններին, արևելագիտներին, աղբյուրագետներին, ազգագրագետներին, ժողովողագրությամբ զբաղվողներին և ընթերցող լայն շրջանակներին:

ԴՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-826-35-6

© Ավագյան Ի., 2015

## Երիախի Երկիրը սեպագիր աղբյուրներում

Յայ պատմագիտության մեջ պատմական Շիրակ գավառի սոցիալ-քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքը, տեղի բնակչության երևույթով գրական իրավիճակն ու սոցիալական կազմը թ.ա. VIII-VI դդ. Ներկայացնող և Այսրկովկասի ու Վանի թագավորության վարչատարածքային բաժանումների համակարգում ունեցած դերի մասին բազմաթիվ տեղեկությունները ցրված են գրավոր աղբյուրներում, արձանագրություններում, պատմիչների գործերում, գիտական գրականության մեջ: Սույն աշխատանքի նպատակն ենք համարում ի մի բերել, լրացնել և ամփոփել Շիրակի Երիախի Երկրի հին շրջանի՝ մասնավորապես բիայնական դարաշրջանի պատմությունը թ.ա. VIII-VI դդ. և հավաքել Երիախի Երկրի և հարևանների մասին վանտոսայան արձանագրություններում պահպանված գրավոր հիշատակությունները: Սա անհրաժեշտ է Երիախի Երկրի և թագավորության դերը թե՛ Յյուսիսային համադաշնության, թե՛ վանտոսայան մշակութային համակարգում (թ.ա. VIII-VI դդ.) բացահայտելու համար: Նաև հին ու նոր տվյալների և աղբյուրների հիման վրա Երիախի Երկիրը, նրա փոխարարերությունները հարևան Երկրների, Յյուսիսային համադաշնության և Վանի թագավորության կենտրոնի հետ ներկայացնելու համար:

Ծեշտադրելով Երիախի և պատմական Շիրակի տարածքում (թ.ա. VIII-VI դդ.) կազմավորված մյուս Երկրների գարգացման օրինաչափությունները՝ բացահայտել այդ փոխարարերությունների նմանություններն ու տարբերությունները: Շիրակի պատմության և հնագիտության ուսումնասիրության համար կարևոր են բիայնական այն արձանագրությունները, որոնցում հիշատակվում են Երիախի Երկիրը կամ նրա հարևաններից որևէ մեկը: Աշխատանքում ըստ հերթականության, ժամանակագրական կարգով ներկայացված են՝ ա. Արգիշտի լ-ի Խորխորյան<sup>1</sup> տարեգրության այն հատվածները, որտեղ արքան խոսում է Երիախի կամ նրա հարևանների դեմ կազմակերպած նվաճողական արշավաճրների մասին, բ. Արգիշտի լ-ի Խորխորյան տարեգրության կրկնօրինակը համարվող Վանի Ս. Սահակ Եկեղեցու սեպագիր կոթողը, գ. Ժամանակակից Կարսի վիլայեթի Յանակ շրջկենտրոնից ոչ հեռու գտնված սեպագիր արձանագրությունը, որը որոշ նմանություններ ունի

<sup>1</sup> Արգիշտի անվան ուրարտերենից ճիշտ տառադարձումը Արգիշտին է: Գ. Մրվանձտյանցը Արգիշտիի տարեգրությունը անվանում է Խորխորյան, հաճախ նաև հանդիպում ենք տվյալ բարի Խորխորյան ձևին: Տես ՅժՊ քրեստոնատիա:

Խորխորյան տարեգրության, Վաճի Ս.Սահակ Եկեղեցու սեպագրի և Արգիշտի Լ-ի թողած Սարիդամիշի արձանագրության հետ, դ. Արգիշտիի՝ Սարիդամիշի, Սպանդարյանի, Սարմաշենի արձանագրությունները և Վաճի թանգարանում պահպանվող ազգաբեն ուղղակի արձանագրությունը՝ մեկի արձանագրությունը՝ մանրամասն վերլուծություններով, ե. Սարդուրի II-ի տարեգրության այն հատվածները, որտեղ արքան դարձյալ պատմում է Երիախի կամ նրա հարևանների դեմ կազմակերպած նվաճողական արշավանքների մասին, գ. Ուլսա Լ-ի՝ Ծովինարի արձանագրությունը, որտեղ Երիախի երկրի անվանումը հանդես է գալիս «Երկիր Երիանի» ձևով, է. Ուլսա Լ-ի՝ Թոփրաք-կալեից հայտնաբերված կավե աղյուսակի սեպագրի տեքստի այն հատվածը, որում արքան խոսում է Իշկիգուլու երկրի թագամառանց Շագաաշթարային Մանա Երկրի կառավարիչ նշանակելու մասին (իհարկե, խոսքը Մանայի մի փոքր հատվածի մասին է, որը նվաճվել էր Ուրարտուի կողմից): Այսպիսով ներկայացված են 15 արձանագրություններ ուրարտական աղբյուրներից, մեկ սեպագրի արձանագրություն կրող ուղղակի և մեկ արձանագրություն ասուլաբարելական աղբյուրներից՝ Աշուրիսուայի գեկույցը ուղարկված Սարգոն II-ին, որտեղ հիշատակվում է Երիախի համադաշնության մասը կազմող Գուրիանի երկիրը:

Թարգմանությունը կատարված է ըստ Պ.Յ. Հովհաննիսյանի, Ա.Ե. Մովսիսյանի խմբագրած «Դայ ժողովրդի Պատմության քրեստոմատիալի», Դ.Կարազյոյանի թարգմանությամբ կատարված «Վաճի թագավորության սեպագրի աղբյուրները Դայկական լեռնաշխարհի և հարևան պետությունների մասին» գլխի, էջ 161-169, 174-181, 183-184 և ըստ Ն.Վ. Զարությունյանի, «*Корпус урартских клинообразных надписей*», Գ.Ա. Մելիքիշվիլիի «*Урартские клинообразные надписи*», Ի.Ս Դյակոնովի «*Assyro-аввилонские источники по истории Урарту*», «*Урартские письма и документы*», Գ.Վ. Ծերեթելիի «*Урартские памятники музея Грузии*», თბილիսի, 1939, Զ. Լաճքրանչիի և Ս. Փարփոլայի «*The correspondence of Sargon II*», Part II, Letters from the Northern and Northeastern provinces, Ս. Սալվինիի «*Corpus dei testi Urartei*, volume I, «*Corpus dei testi Urartei*, volume IV», համահավաքների: Պատմական Շիրակի և հարևան տարածքների վարչական բաժանումը ուրարտական տիրապետության ներք արտացոլելու համար կազմել ենք քարտեզ՝ «Երիախի երկիրը Ք.ա. VIII-VIIդ.» (տե՛ս աղ. I):

Խորխորյան տարեգրության առաջին սյունակում (տե՛ս հավելված՝ Արգիշտի Լ, Խորխորյան տարեգրություն, սյունակ I) Արգիշտին (Ք.ա.

786-764 թթ.) պատմում է, որ այդ տարում Երրորդ անգամ զինվորներ գնդելով արշավել է Դիառուեխի ցեղի վրա և հպատակեցրել Դիառուեխի արքային, ապա գրավելով Շերիազի Երկիրը՝ քաղաքները այրել, ամրոցները ավերել ու հասել է մինչև Բուրփի քաղաքը (5-8 տողեր): Ապա Արգիշտին պատմում է Զարախս (I, 9-10 տողեր) և Իգանի (Իյանի) (I, 11-րդ տող) կատարած արշավանքի մասին, որի ընթացքում գրավվում է Զարախս, իսկ Մակալբունի քաղաքն անջատվում է Իգանիից: Այս արշավանքի ուղղությունը ճգվում էր հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք: արշավանքի ընթացքում Արգիշտին առաջին անգամ հայտնվում է Շիրակուն: Տարեգրության և սյունակի 11-րդ տողում Արգիշտին նշում է, որ Իգանիի Մակալբունի քաղաքը նվաճելուց հետո Եկել է Երիախի Երկրի վրա, ապա արշավել է Արունի և Ուհիտերուլիսի (Վիտերուլիսի) (**ԿՅՀՀ/173-1** 12-րդ տող): 13-14 տողերում արքան բերում է գերեվարվածների հանրագրումարը՝ 19225 պատանի, 10140 Երիտասարդ զինվոր, 23280 ստրկուիի, ընդամենը՝ 52675 մարդ, որոնք գերվել էին մեկ տարում: Գերիներից ոմանց արքան սպանել էր, ոմանց ողջ տարել: Արգիշտին քելտարել էր 1104 օդի, 35015 խոշոր Եղերավոր անասուն, 101829 ոչխար: Խալդիի փոխարեն սույն մեծագործությունները նա կատարել էր մեկ տարում:

Նույն հատվածի՝ հաջորդ տարվա արշավանքի նկարագրության մեջ արքան պատմում է Երիախիի դաշնակից և հարևան Արիլիանիիսի, Անիշթերգա, Կուտարզանի, Ուլքուզանինի Երկրները նվաճելու (17-18 տողեր) և այս Երկրները հպատակեցնելու՝ գգետնելու մասին: Արշավանքի հաջորդ ուղղությունը այդ նույն տարում դեպի Եթունի էր, որը Արգիշտին նվաճում է՝ հասնելով Իշկիգուլու Երկիրը և Եթունի Երկրի Ուղուրի ցեղը (21-22): Բնականաբար, այս արշավանքը կատարվելու էր Եթունիի կազմի մեջ մտնող Երիախիի համադաշնության տարածքով: Արքան պարզապես պատմում է, որ գերել է տղամարդկանց և կանանց, սակայն որևէ թվային տվյալ այստեղ չի բերում, այլ շարունակում է պատմել այդ տարում կատարած մյուս արշավանքների մասին: Ավարի մասին տվյալները նա բերում է մի քանի այլ Երկրների դեմ արշավելուց հետո միայն: Գերեվարվել էր 8 հազար պատանի, 11 հազար կին<sup>2</sup>, ընդամենը 20279 մարդ մեկ տարում (38-43 տողեր): Արքան ոմանց սպանել էր, ոմանց գերի տարել: Սակայն ավարի հանրագումարը (որը արձանագրության մեջ թերի է պահպանված՝ 1280 օդի, [...] խոշոր Եղերավոր անասուն, 126 հազար [...] ոչխար, արշավանքի փառահեղ ավարտը և իր տիտղոսաշա-

<sup>2</sup> Թվերը թերի են:

ող) արքան բերում է Խորխորյան տարեգրության II սյունակի 1-4 տողերում:

Խորխորյան տարեգրության՝ մեզ հետաքրքրող հաջորդ հատվածում Արգիշտին հայտնվում է Արարատյան դաշտում, որտեղ էլ հիմնադրում է Երեբունին (սյունակ II 25-37 տողեր) (**ԿՅԿՀ/173**): Խորխորյան տարեգրության IV սյունակի 72-73 տողերում արքան պատմում է Արգիշտիխինիլի հիմնադրան և Ուազա (Վազա) երկրում ջրանցքի կառուցման մասին (**ԿՅԿՀ/173, ԴժՊ քրեսոլմատիա**, էջ 167): Այս տեղեկությունները կրկնվում են Խորխորյան տարեգրության կրկնօրինակը համարվող Վանի Ս.Սահակ Եղեղեցուց հայտնի արձանագրության մեջ՝ A2 15-րդ տող, B2՝ 40-42 տողեր:

Խորխորյան տարեգրության V սյունակի 33-35 տողերից՝ արշավանքի հօչակագրից, պարզ է դառնում, որ այդ տարի Արգիշտին արշավել ու գենքի ուժով տապալելով՝ հյատակեցրել է Մանա և Երիունի երկրները:

Խորխորյան տարեգրության մեջ Երիախի երկրի մասին երկրորդ հիշատակությունը, որը նաև իր բովանդակությամբ համընկնում է Մարմաշենի արձանագրությանը, ԿՅԿՀ-173 V սյունակի 41-49 տողերում է: Արքան պատմում է, որ լսելով, թե Երիունի երկրից եկել և Արդինի (քաղաքի) «Աշտիուզին» հափշտակել են //, հենց այդ նույն տարրում Երրորդ անգամ զորք է գնդել, և աղոթելով խալի տիրոջը, Թեյշեբային, Շիվինիին և Բիայնիլի երկրի աստվածներին՝ արշավել. արքայի՝ իշխանական մեծությամբ աղերսամքը վերևում լսում էին աստվածները:

Ըստ Գ.Մելիքիշվիլու կարծիքի՝ խոսքը Երիունյան ջոկատների կողմից խալդ աստόն կամ կուռքի հափշտակնան մասին է, ընդ որում ուսումնասիրող աշտիուզ բարի տակ հակված է տեսնել հայկական «աստուած» բարի նախաձեռ, սակայն Ն.Զարությունյանը կարծում է, որ խոսքը ավելի շուտ նույնանուն այլ կենտրոնի մասին է՝ «Երիունյան Արդինիի», որը գտնվում էր Բիայնիլիի հյուսիսում, որտեղ բռնկված ապստամբությունը ճնշելու պատճառով Արգիշտի թագավորը ստիպված էր արշավանք կազմակերպել, (**ԿՅԿՀ/173-V, ծան. 44**) ընդ որում՝ երիցս (**ԴժՊ քրեսոլմատիա**, էջ 167):

Շիրակի, մասնավորապես՝ Երիախի երկրի կրոնի մասին պատկերացում ստանալու համար անհրաժեշտ է անդրադառնալ Արգիշտի I-ի՝ Ք.ա. 768 թ. արշավանքին: Այս արշավանքը մի առանձնահատուկ արշավանք էր՝ ուղղված Յյուսիսարևմտյան համադաշնության դեմ: Արշավանքն ուներ կրոնահոգեբանական շարժառիթներ, որոնք ուսումնասիրելով՝ կարելի է որոշ գաղափար ունենալ համադաշնության կրոնա-

պաշտամունքային պատկերացումների նասին: Իր թագավորության տասներեքերորդ տարում, երբ Արգիշտին գտնվում էր Մանայում, լսում է, որ «Երիունի Երկրից /Եկել ու/ տարել Են Արդինի քաղաքի Աշտիուզեն», այսինքն՝ Մուծածիր քաղաքի Խալդիի տաճարի արձանիկներից մեկը (**Դմայակյան Ա., Ծիրակը Լուշա-Կատարզա-Վիտերուխե...**, էջ 22-23): Նման երևույթ կար դեռևս խեթական շրջանում, երբ ընդունված է Եղել խեթական տերության տարրեր շրջանների բնակավայրերի, լեռների, գետերի, աղբյուրների և այլ աստվածությունների երկրագաման կանոնակարգը: Աստվածության արձանը տաճարի մի հարկաբաժնից (արձանի գտնվելու մշտական վայրից) տեղափոխում էին կամ կոչվող հաստատություն, դնում էին պատվանդանին, կատարում էին մատուցումներ, ապա աստծո արձանը հետ էին տանում: Իրենց աստվածություններով ներկայացված հեռավոր շրջանների և հատկապես խեթական տերությունից դուրս գտնվող երկրների հիշատակությունը ստիպում է Ա.Քոսյանին ենթադրել, որ ծիսական արարողությունները պիտի ընթանային մայրաքաղաք Խաթրուսափ կամ որա մոտակայքում գտնվող որևէ տաճարում, որտեղ տեղադրված էին համապատասխան աստվածությունների արձանները (**Թոսյան Ա.**, էջ 315-331): Դնարավոր է, որ տաճարում ոչ բոլոր գրավված երկրների աստվածների կուռքերն են տեղադրված Եղել, կուռքի բացակայության դեպքում արարողությունը կազմակերպելու համար այդ արձանները ստիպված էին բերել հեռավոր շրջաններից, ինչպես «Արդինի քաղաքի Աշտիուզեն»: Կուռքը չվերադարձնելու պատճառով տեղի էր ունեցել կրոնաքաղաքական բնույթ կրող այդ ընդհարումը /<sup>7</sup>/: Խեթական այս ավանդույթը համարելով ընդհանրական ողջ տարածաշրջանի համար՝ Ուրարտու, Ասորեստան, Եթիունի, և այսպիսի տաճարներից մեկը համարելով Մուծածիրի Խալդ աստծո տաճարը, որը նաև ասորեստանցիների պաշտամունքային կենտրոններից էր, կարելի է եզրակացնել, որ նախընտրելի է ստորև բերվող Ռուսա II-ի սեպագիր այսուսակի՝ ի. Դյակոնովի առաջարկած թարգմանությունը: Դամաձայն դրա՝ «Կիլբանի Երկրի մոտ սրբավայրից Ռուսախինիլի էին վերաբնակեցրել Խալդ տիրակալին» (**ՍՊՀ**, ծան. 28): Կարելի է եզրակացնել, որ Արդինի (Մուծածիր) քաղաքի Աշտիուզեն մեծ կրոնապաշտամունքային նշանակություն է ունեցել Հյուսիսարևմտյան համադաշնության մեջ մտած իշխանությունների և երկրների համար: Առավել ևս, Եթե արձանը պատկանել է Խալդ աստծուն, նշանակում է՝ ուրարտական և Եթիունյան կրոնապաշտամունքային պատկերացումները այնքան էլ հեռու չեն Եղել իրարից:

47-50 տողերից իմանում ենք, որ արշավելով Երիունի Երկրի վրա՝ նա նվաճել է Երիախի ցեղի Երկիրը և Քարարզա ցեղի Երկիրը, մինչև Իշկիգուլու Երկիրը, տղամարդկանց և կանանց արքան քշել է Բիայնիլի:

Այս տողերի և Արգիշտիի՝ Մարմաշենի արձանագրության մանրամասն համենատունը կկատարենք ստորև: V սյունակի 51-65 տողերում Արգիշտին խոսում է Երիախիի հարավային հարևան և դաշնակից Վիտեռուիսի (Ուիտերուիսի) Երկիրը Խալդյան զորությամբ հպատակեցնելու, Երկրի քաղաքները այրելու, ամրացված Ամեգու արքայական քաղաքը կրվով գրավելու, այստեղ արձանագրություն թողնելու և գերիներ տանելու մասին: Ոմանց արքան սպանել էր, ոմանց ողջ տարել:

V սյունակի 66-69 տողերում արքան բերում է Խալդիի համար<sup>3</sup> իր՝ մեկ տարում կատարած արշավանքի ավարի հանրագումարը՝ 1200... ձի, 29504 խոշոր Եղջերավոր անասուն, 60 հազար ... ոչխար:

Խորխորյան տարեգրության տեքստի առանձին հատվածների կրկնօրինակ է համարվում Վանի Ս. Սահակ Եկեղեցում հայտնաբերված արձանագրությունը **ԿՅԿՀ 174 A, B**, որն արված է Երկու քարերի վրա (*Salvini M.*, էջ 58): Այս արձանագրության շնորհիվ Վ. Բելը փորձեց վերականգնել Խորխորյան տարեգրության ամբողջական կառուցվածքը, իսկ Գ. Մելիքիշվիլիին հաջողվեց Վերականգնել տարեգրության հիմնական տեքստի վճասված հատվածները և տարեգրության դեպքերը դասավորել ըստ Արգիշտի 1-ի կառավարման տարիների: Դատուկ գրականության մեջ արտահայտված է այն կարծիքը, որ Վանի արձանագրության Երկու բեկորները պատկանել են նույն հուշակոթողին, սակայն բացակայում են A և B մասերի միջև եղած հատվածը և ստորին B հատվածից ներքև եղած հատվածները: A հատվածի բոլոր չորս կողմերը ծածկված են սեպագրով՝ A1, A2, A3, A4, իսկ B հատվածի՝ միայն առջևի և հետևի կողմերը՝ B1, B2 (**ԿՅԿՀ /174/**): Այս արձանագրության A1, B1 հատվածներում Արգիշտին պատմում է Բիայնիլիի հյուսիսարևմտյան հարևանի՝ Դիաուխի հզոր ցեղամիության հպատակեցման մասին: Ապա **ԿՅԿՀ 174 B1 27-40** տողերում արքան պատմում է, որ Խալդյան զորությամբ հպատակեցրել է Երիունի Երկիրը և նշում է, որ հաղթել է Դիաուխի արքային Երեք տարի անընդեզ օգնության Եկած Լուշա, Քարարզա Երկրներին և Երիախի ցեղի Երկրին, Գուլութախի, Ուիտերուիսի Երկրներին՝ հասնելով մինչև Արունի Երկիրը: Արգիշտին պատմում է, որ

<sup>3</sup> Այս և ստորև հանդիպող մյուս հատվածներում ըստ ՀԺՊ քրեստոմատիայի՝ «Խալդիի փոխարեն»:

ամորձատել է Լուշա Երկրի արքային, իսկ Իգա Երկրի արքային նա ստրկացրել է, սակայն հարկ վճարելուց հետո թողել է իր տեղում: Հատվածի ընդհանուր բովանդակությունից կոակիում ենք, որ Արգիշտին այս արշավանքը իրագործել է Դիառիկի կատարած արշավանքից հետո տարածաշրջանում իր դիրքերն ամրապնդելու և նոր տարածքներ նվաճելու համար:

ԿՅՀ 174 Ա3 16-23 տողերում Արգիշտին պատմում է. «Խալդ աստծոն զորությամբ և Խալդյան իրամանով, երբ Խալդ աստվածը Մենուայի որդի Արգիշտիին թագավորություն տվեց, և նա բազմեց հայրական գահին»: Ապա թվարկվում են արքայի տիտղոսները՝ «Խալդ աստծոն զորությամբ Արգիշտին՝ Մենուայորդին, հզոր արքան, Բիայնիլի Երկրի արքան, Տուշպա քաղաքի կառավարիչը», որից հետո Արգիշտին պատմում է, որ Եթունի Երկիրը ապստամբած էր, և արքան արշավելով Եթունիի դեմ՝ գենքի զորությամբ հպատակեցրել է Երկիրը: Ճնարավոր է, որ այս ապստամբությունը համբնել է Մենուայի մահից հետո ծագած անկայուն իրավիճակին մինչև Արգիշտիի գահ բարձրանալը, և հավանաբար որոշ տարածքներ (Ուխտերությին՝, Երիքությին՝) Մենուայի մահից հետո դարձալ ցանկացել էին մտնել Եթունիի համադաշնության մեջ՝ ապստամբելով Արգիշտիի դեմ:

Ն. Հարությունյանը Խորխորյան տարեգրության կրկնօրինակ է համարում Վանից հայտնի ԿՅՀ 175 ա.բ., Երկու մասից բաղկացած, բազալտե քարի վրա արված արձանագրությունը, որը պահպում է Վրաստանի թանգարանում: Արձանագրությունը թերի է, սակայն պահպանված ընդհանուր բովանդակությունից պարզ է դառնում, որ խոսքը Եթունի խոշոր համադաշնության դեմ տարօծ հաղթանակի մասին է, որի կազմի մեջ էին մտնում պատմական Շիրակի վարչական մասը կազմող Գուլութքային և Ամիշթերգան (ԿՅՀ 175 ա.բ. և ս.):

Ուշագրավ է Հանակի՝ (Օռթաքենո) ԿՅՀ 174 Ը թերի տեքստով արձանագրությունը, որը հայտնաբերվել է 1985 թ. ներկայիս Կարսի վիլայեթի շրջկենտրոն Հանակից ոչ հեռու՝ Օռթաքենդ գյուղից 2 կմ հեռավորության վրա (ԾՒ 1, Ա 8-7)՝ Զլդը լճից հյուսիս-արևմուտք, Արդահանից՝ հյուսիս-արևելք: Արձանագրությունը շատ ընդհանրություններ ունի Խորխորյան տարեգրության I-ին սյունակի 6-8 տողերի, ինչպես նաև տարեգրության կրկնօրինակը հանդիսացող 174 Բ1 1-11 տողերի և Սարդիանիշի արձանագրության որոշ տեղեկությունների հետ (ԿՅՀ 176): Կարևոր են Սարդիանիշի արձանագրության հետ կապված տեղեկությունները. Արգիշտին, նախ արշավելով Թարիունի (1-6 տողեր), ենթար-

կել և հապատակեցրել է այս երկիրը: Արշավանքի ճանապարհը անցել էր խուշանացիների և բիայցիների երկրներով և հասել էր Աշկալաշի երկիրը: Յավանաբար այս արշավանքի ընթացքում ամենալուրջ դիմադրությանը Արգիշտին հանդիպել էր Ախուրիանի քաղաքի մարզում (7-8 տողեր), երբ նրան դեմ էր դուրս եկել Դիառլիսի ցեղի արքան: Արգիշտի արքան զորքը հետ էր շարտել, Կա[...]ունի մարզի քաղաքները ոչնչացրել: Ապա (9-10 տողեր) արքան պատմում է, որ ավար է արել, ու թերում է արշավանքի ընթացքում գերեվարվածների ընդիանուր հանրագումարը՝ 72080 պատմի, 7000 մարդ, 11 հազար... Մի մասին արքան սպանել էր, մի մասին կենդանի տարել: Արշավանքի ընթացքում արքան ավերել էր 6 ամրոց և 50 քաղաք: Սակայն արձանագրության ուշագրավ հատվածներից է նաև անեծքի բանաձևը (12-13 տողեր). «Ով այս արձանագրությունը ոչնչացնի, թող ոչնչացնեն Խալդին, Կուեռան նրան արևի տակ...»: Գլխավոր ընդիարումը տեղի էր ունեցել պատմական Շիրակի վարչական մասը կազմող Աշտուկինի երկրի Ախուրիանի բնակավայրի մոտ, և գերիների մեջ էին նաև այս երկրի բնակիչները: Սարիդամիշի արձանագրության մեջ Արգիշտին ավելի մանրանասն է խոսում Ախուրիանի ճակատամարտի մասին:

Անեծքի բանաձևում Խալդիի հետ հիշատակված է Կուեռան: Այս հազվադեպ հիշատակությունը վկայում է Յայկական լեռնաշխարհի հյուսիսում՝ Վանանդի և Շիրակի տարածքում, Կուեռա աստծո պաշտամունքի մասին: Յայկական լեռնաշխարհի արևմուտքում Կուեռայի պաշտամունքի մասին է վկայում Իօնոլուի արձանագրությունում հիշատակված «Կուեռա աստծո Թաշե քաղաքը» (**ԿՅԿՀ/244-31**):

Կուեռան Մհերի դրան արձանագրությունում (**ԿՅԿՀ/83-8**) հիշատակված տասնչորսերորդ աստվածությունն է, որը դարձյալ հնդեվրոպական ծագում ունի (**Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ., Կարմիրըլուրյան ԹԱՄԱՐ. ՄՏՍ...**, էջ 65-71): Այս աստվածությունն իր մեջ ներառել է հողի, երկրի, ցամաքի պաշտամունքը: Նրան վերագրվում է նաև վիշապային եռթյուն, նա է պտղաբերության աստվածը, երկրի ընդերքի ջրերի ջրհորների (Յնայակյան Ս., Կուեռա-Կուառ..., էջ 153-167), քաղցրահամ ջրերի տիրակալն ու նրանց պահապանը՝ վիշապի կերպարով: Ըստ Մենուայի արձանագրություններից մեկի՝ Կուեռայի վիշապակերպ պաշտամունքի հետ է կապվում նաև «Եժդահա բուլակին»՝ «Աժդահակի (Աժդ-Դահակի) աղբյուրը» (Յնայակյան Ս., Վամի քաջավորության պետական կրոնը, էջ 50-51): Այս աղբյուրը առնչվել է Կուեռայի պաշտամունքին, և պատահական չէ, որ այն կրել է Աժդահակ՝ Վիշապ անունը: Գեղա-

մա լեռներում է գտնվում Աժդահակ ամենաբարձր լեռնագագաթը, որի բարձրությունը 3598 մ է: Տարվա մեջ մասը լեռը ծյունածածկ է, լանջերը լերկ են: Գագարն ունի կոնաձև տեսք, խառնարանի խորությունը 40-50 մ է, որը լցված է ջրով: Լեռան հյուսիսային փեշերից սկիզբ է առնում Գավառագետը (**ԴՏԲ հ. I**, էջ 54): Այսպիսի անվանում ունեցող լեռան գոյությունը եթիունյան համադաշնության մասը հանդիսացող Վեդուրի-Եթիունի ցեղամիտության սահմաններում հուշում է, որ եթիունի ցեղերն ու Երկրները քաջ ծանոթ էին Կուեռա աստծո վիշապային էությանը: Լեռան խառնարանի նկարագրությունը ապացույց է Կուեռայի՝ վերը նշված բնույթների մասին՝ երկրի աստվածություն, արտեզյան ջրերի աստված: Կուեռայի պաշտամունքը Յայկական լեռնաշխարհի հյուսիսում եղել է ուրարտական տիրապետության այստեղ հաստատվելուց ավելի վաղ, միայն թե ուրարտական դինաստիայի հովանավորող աստված Կուեռայի պաշտամունքը տարբերություններ ուներ եթիունյան Կուառից: Սակայն ուրարտական դարաշրջանում միևնույն ծագման ու բնույթի այս երկու, սակայն զարգացման տարբեր ուղիներ անցած պտղաբերության, քաղցրահամ ջրերի վիշապաբնույթ Կուեռա և Կուառ աստվածությունները միաձուլվեցին, փոխներգործեցին, հղկվեցին և ստացան նոր շունչ: Կուեռայի հետ է առնչվել Օշականի տաճարի կրակի և ֆալոսների պաշտամունքը (**Դմայակյան Ս.**, **Վանի թագավորության...**, էջ 55): Կուեռան հնդեվրոպական ծագում է ունեցել և դրանով է պայմանավորված նրա համատարած պաշտամունքը Յայկական լեռնաշխարհում, որտեղ գոյատևել է մինչև վաղ միջնադար: Եթիունյան համադաշնության մեջ մտնող Երիախի ցեղամիտությունը ընդունած պիտի լիներ Կուառ-Կուեռա աստծո պաշտամունքը և այս աստծուն պիտի պաշտեր իբրև գերագույն աստվածներից մեկը, քանի որ ուրարտական սեպագրերում հիշատակվող երկու տեղանունները, որոնց հետ էր կապվում Կուեռայի անվան ծագումը՝ Quarzani երկիրը և Կուառլինի հովիտը (**ԿՀԿՀ** /421-6), (վերջինս հիշատակվում է Ռուսա II-ի՝ Զվարթնոցի արձանագրությունում) գտնվում են. առաջինը՝ Ամիշթերգա (Արաքս գետի հյուսիսային ափին՝ Արենյանքի և Արաքս ու Ախուրյան գետերի խառնարանի միջև), որը չափազանց մոտ է Երիախի երկրին, և Ուլտուզա (Արտազ-Մակու) երկրների միջև՝ Արաքս գետի ափին՝ Մասիսի արևելյան և հարավային լանջերի մոտ, երկրորդը՝ Կարմիր բլուրի և Էջմիածնի միջև եղած տարածքում: Շիրակում և հարլան տարածքներում Կուեռայի պաշտամունքի մասին վկայող ամենակարևոր փաստը Յանակում՝ Կարսի վիլայեթի շրջկենտրոնից ոչ հեռու, Չլդըր լճից հյուսիս-արևմուտք, գտնված այս արձանագ-

րության 12-13 տողերն են, որտեղ Արգիշտին գրում է.«(12) Ով այս արձանագրությունը ոչնչացնի, թող ոչնչացնեն Խալդին, Կուեռան, (13) նրան արկի տակ» (*ԿՅԿՀ*/174 C): Սա այն եզակի վկայությունն է, որտեղ անեծքի բանաձևում հիշատակվում է Կուեռան: Յետևաբար, այս շրջաններում Կուեռա-Կուառի պաշտամունք է եղել, առավել ևս, որ որոշ ուսումնասիրողներ Կուեռային համարում են Թեյշեբայի որդի և սրանով պայմանավորում Կուառլինի դաշտավայրի անվանումը Կուեռայի անվանք և նույն տարածքում՝ Կուառլինիում, Թեյշեբայնիի կառուցումը՝ ի պատիվ Կուեռայի հոր՝ Թեյշեբա աստծո (*Դմայակյան Ս., Կուեռա-Կուառ...*, էջ 167): Յովիհան Մամիկոնյանը նշում է, որ «Կուառսն կառուցվել է Վիշապ քաղաքի տեղում» (*Դովիհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն*, էջ 47): Անհերքելի մի փաստ, որն ամրապնդվում է նաև Յանակից հայտնի ուրարտական վավերագրով: Ն. Սառը Կուառ քաղաքը նույնացնում է վիշապ քաղաքի հետ (*Սառ Ն.*, էջ 38), իսկ Ս. Դմայակյանը Կուառ-Կուեռային համարում է վիշապաբնույթ մի աստվածություն (*Դմայակյան Ս., Կուեռա-Կուառ...*, էջ 153-167):

Միջնադարյան նշանավոր փիլիսոփա և պատմիչ Գրիգոր Մագիստրոսը մի լեզենդ է հիշում, համաձայն որի՝ քարի ծոլկ Աժդահակը խոսրովի կնոջը նվիրել էր մի քանկարժեք մարգարիտ (*Պոտրովսկի Բ., Բաշառի...*, էջ 28): Այս լեզենդը Բ. Պիոտրովսկուն հիմք է տալիս վիշապի պաշտամունքը նույնացնել ձկան պաշտամունքի հետ, ձկան պաշտամունքին էլ մերձեցնել օճի պաշտամունքը, որը նույնպես ջրի խորհրդանշին է համարվում (*Պոտրովսկի Բ., Բաշառի*, էջ 29): Ն. Սառը վիշապի «վեշ» կամ «ավշ» քաղադրիչը նույն աստծու հաբեթական հոգնակի ձևն է համարում (*Պոտրովսկի Բ., Բաշառի...*, էջ 38):

ա. Սարիդամիշի արձանագրություն (*ԿՅԿՀ*/176, *Վերեռու Ղ.*, էջ 52-55): Արձանագրությունը գտնվել է 1878 թ. Վերին Սարիդամիշում (Կարսից 53 կմ հարավ-արևմուտք) Ա. Երիցյանի կողմից: Նրա խոսքերով՝ լեռնեցիների կողմից քարը բերվել էր 5 վերստ հեռավորության վրա գտնվող անտառում եղած ավերակներից և դրվել իրենց կառուցած մզկիթի արտաքին պատի մեջ հյուսիսարևելյան կողմից (*ԿՅԿՀ* /176, 218, էջ 52): 1881 թ. Սարիդամիշ գյուղի ավագ Տրիանդիլովը Կարսի մարզի ռազմական նահանգապետ Ֆրանկինի հրամանով սեպագիրը տանում է Թթվիլիսի: Ըստ Ս. Նիկոլսկու հաղորդած տվյալների՝ սեպագիրը երկար ժամանակ դրված է եղել Կովկասյան թանգարանի բակում, հետո տեղափոխվել և դրվել էր թանգարանի սանդղամուտքում՝ ջրի ծորակի մոտ, և հայտնվել երկարատև խոնավության մեջ (*Վերեռու Ղ.*, էջ

52): Բացի սրանից՝ Մ.Նիկոլսկին նաև ենթադրում է, որ սեպագիրը բավական տուժել է բակից դեպի սանդղամուտք քարշ տալու պատճառով, ինչի արդյունքում վնասվել է վավերագրի աջ կողմը (*Վերեռություն Հ.*, էջ 52): 1939թ. դրությամբ և ըստ Գ.Ծերեթելու հայտնած տվյալների՝ սեպագիրը բաժանված էր վեց բեկորների, կոտրված էին ստորին ձախ և աջ մասերը, սեպերը գրեթե անընթեռնելի էին, և միայն քիչ թե շատ բարփոք վիճակում մնացած առանձին մասերը թույլ են տալիս պատկերացում կազմել սեպագրի իրական տեսքի մասին (*Վերեռություն Հ.*, էջ 52-53): 1-8 Տողերում արքան պատմում է, որ գրավել է Ախուրիանի քաղաքը, Աշտուխինի ցեղի երկիրը, 4-րդ տողից իմանում ենք, որ այստեղ գալով՝ արքան լցուի էր ար-ները և նվաճել Աշտուխինին, ինչից հետո էթիունի երկրից եկել էր ողջ հզոր զորքը: ճակատամարտն այնքան կարևոր էր, որ արքան հաղթանակի համար հատուկ աղերսել էր (9-15 տողեր) Խալդիին, Թեյշեբային, Շիվինիին, բոլոր աստվածներին, որոնք, լսելով արքայի խնդրանքը, հաղթանակ էին շնորհել նրան: Արքան հետ էր շպրտել թշնամուն, հետապնդել մինչև Կալրախի մարզի քաղաքը: 16-17 տողերը թերի են, և մենք մասսամբ ենք իմանում տարված ավարի մասին՝ ...հազար ...հարյուր ... պատահի, ... հազար 50 ողջ մարդ, 6 հազար ... կին:

Ինչ վերաբերում է 4-րդ տողին, ապա այն թերի է, և մնացած սեպանշանների իման վրա Մ.Նիկոլսկին, Գ.Ծերեթելին, Գ.Մելիքիշվիլին, Մ.Սալվինին վերականգնում են «ար»՝ հացահատիկի շտեմարան, բառը: Ն.Յարությունյանը նախ եղակացնում է, որ հաղթարշավները ներկայացնող արձանագրություններում այս և Սարդուրյան տարեգրության 350 շտեմարանների<sup>4</sup> նվաճման մասին հիշատակության դեպքերը եզակի են, և ուրարտացիների համար շատ կարևոր էին Վանանդի ու Շիրակի հացահատիկային շտեմարանները, մյուս դեպքում էլ, հենվելով Ֆ.Քյոնինգի կարծիքի վրա, ժխտում է իր այս տեսակետը՝ մեկնաբանելով, որ հազիվ թե հաղթարշավներում խոսվի հացահատիկի շտեմարանների նվաճման մասին (*ԿԿՀ* 176 ծան., *Վերեռություն Հ.*, էջ 52-53, *СТУ Ի* A8-2Vo): Ընդունելի է թարգմանության «ար-ները լցուեցի» ձևը, համաձայն որի՝ Աշտուխինին և երկրի շտեմարանները դառնալու էին ուրարտական բանակի թիկունքը ապահովող հենակետ, որը դեպի հյուսիս

<sup>4</sup> Եթե ուշադրություն դարձնենք, Ն. Յարությունյանի երկու աշխատություններում շտեմարանների թվերը տարբեր են: «Յամագելուս և սկոտովություն Ուրարտու» աշխատության մեջ հեղինակը նշում է 150 գաղտնի շտեմարանների մասին, իսկ *ԿԿՀ*-ում 241/C 27, 31, թիվը հասցնում է 350-ի:

կազմակերպած արշավանքների ժամանակ արքային ապահովելու էր սնունդով:

Ուշագրավ է երկու հին քաղաքների՝ Ախուրիանիի և Աշտումինիի (որոնք հիշատակվում են Արգիշտիի՝ Սարիղամիշի արձանագրության մեջ) համադրությունը միջնադարյան և ժամանակակից անվանումներին: Առաջինը, բնականաբար, կապվում է Ախուրյան գետի անվան, իսկ երկրորդը՝ Կարսի շրջանի Աստախանա /Աստախանի/ բնակավայրի անվան հետ (*Պուտրովսկի Բ. Վահսկօ պարտեա*, էջ 31):

Ուրարտական արքաները իրականացրել են նաև էթնիկ տեղահանություններ: Անդրադառնանք Շիրակում կատարված էթնիկ տեղաշարժերի հարցին: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գերեվարված բնակչության աշխատանքը օգտագործվում էր թագավորական, համայնքային և մեհյանային տնտեսություններում պետական նշանակության խոշոր միջոցառումների ժամանակ՝ ամրոցների ու մեհյանների կառուցում, ջրանցքների անցկացում, ինչպես նաև այգեգործության, հողամշակության ու արհեստագործության մեջ: Ավարառուական պատերազմները գերիների ձեռք բերման հիմնական աղբյուրն էին: Ուրարտուի ծաղկման շրջանում (Ք.ա. VIII դ.) ռազմագերիների տարեկան քանակը հասնում էր մի քանի տասնյակ հազար մարդու, որոնք, պետական կամ ինքնուրույն տնտեսվարողների կարգավիճակ ստանալով, օգտագործվում էին ուրարտական տնտեսության տարբեր ոլորտներում: Այսպիսով, նրանց աշխատանքը անուր դրված էր Ուրարտուի բազմաբնույթ տնտեսական կյանքի և քաղաքական կարգի հիմքում: Այս առումով ուշագրավ են արձանագրություններից բերված տեղեկությունները, որոնցից մոտավոր պատկերացում ենք ստանում Երիախի երկրից գերված մարդկանց քանակի մասին: Կարևոր խնդիրներից է, թե էթնիկ տեղաշարժերի ժամանակ կանի արքաները ինչ սկզբունքներով և օրինաչափություններով էին առաջնորդվում: Դաշվի էին առնվում տեղահանված ազգաբնակչության աշխարհագրական միջավայրը, հիմնական գրադարձը, սովորույթները, կրոնապաշտամունքային առանձնահատկությունները, էթնիկ պատկանելիությունը: Ըստ Ս. Հնայակյանի Սևանա լճի հարավարևմտյան ափին տեղադրվող Էթիունյան համադաշնության մեջ մտնող Թուլիխու քաղաք-պետության տեղահանված բնակչությանը Սարդուրի II-ը բնակեցնում է Վանա լճի հարավարևմտյան ափին (*Դմայակյան Ս. Գ., Թուլիխու քաղաք-պետության մասին*, էջ 28-34): Այս տարածքով հոսող գետը, որը գտնվում է Վանա լճի հավագանուն, և նույնանուն գյուղը հայկական սկզբանբյուրներում անվանվում են Թուլիխ-

Թուլս և հավաճարար ծագում են Թուլիխու ցեղի անունից (Տե՛ս 78P հ. II, էջ 491-492):

Սարդիղամիշում Արգիշտի լ-ի թողած արձանագրությունից տեղեկանում ենք Երիախի Երկրի անմիջական հարևան Աշտուկինի Երկրից գերեվարված պատանիների, տղամարդկանց և կանանց մասին (**ԿՅԿՀ/176**): Չնայած արձանագրության՝ մեզ հետաքրքրող 15-17 տողերը թերի են, ինչը թույլ չի տալիս կարդալ գերեվարված տղամարդկանց քանակը: Արքան 17-րդ տողում հատուկ նշում է, որ տղամարդկանց մի մասին չի սպանել, այլ ողջ է գերեվարվել: Դատելով արձանագրության 6 և 7 տողերից «(6) Եթիունի (Երկրից) համայն (?) (7) Եկան հզոր բանակներ»՝ հնարավոր է, որ գերեվարված տղամարդկանց մեջ են մտել Աշտուկինինի օգնության Եկած Եթիունի բանակի զինվորները /<sup>5</sup>/: Սարդիղամիշի արձանագրության տվյալները մեզ պատկերացում են տալիս այս և հարևան բարգավաճ տարածքների ազգաբնակչության խտության մասին: Համարդելով Արգիշտիի և Սարդուրյան տարեգրությունները (**ԿՅԿՀ/173-IV**, 241 Բ 28-44)՝ պարզ հաշվարկի միջոցով եզրակացնում ենք, որ Երիախի Երկրից Սարդուրին տարած կլիներ մոտավորապես 4883 ռազմագերի (8153-3270=4883): Դետևաբար Երիախի Երկրից բավականին բարձր մակարդակ է ունեցել և ստվար բնակչություն: Բնակչության քանակով Երիախին կարող էր մրցակցել այնպիսի խոչոր Երկրների հետ, ինչպիսիք էին Մանան և Աշտուկինին: Մոտավոր թիվը ինանալով՝ կարելի է հաշվել Արգիշտիի Երիախի Երկրի կատարած Երկու և Սարդուրիի ութ արշավաճքների ընթացքում գերեվարվածների հանրագումարը, որը պիտի հավասար լիներ մոտավորապես 50000 մարդու: Այս հաշվարկը խիստ մոտավոր է: 50000-ը նվազագույն թիվն է: Օրինակ ունենալով Աշտուկինից տարված գերիների քանակը, որը երեք անգամ կարող էր գերազանցել 4883-ը, կարող ենք պնդել, որ շատ հնարավոր է, որ տասը արշավաճքների ընթացքում գերի տարվածների քանակը հասած լինի 100000 մարդու<sup>5</sup>: Ավելի վաղ շրջանի վիճա-

<sup>5</sup> Երիախի Երկրից տարված ռազմագերիների քվային տվյալները վկայում են բնակչության ստվարության մասին: Պատմների, տղամարդկանց և կանանց մեջ մասը, որ տարվել էր Երիախի Երկրից, հողագործներ և անասնապահներ էին, որոնց ուժերը ներդրվելու էին ուրարտական բազմանույթ տնտեսության մեջ: Վանի տիրակալները տնտեսական աճուր կազեր ապահովելու համար ստրատեգիական կարևոր վայրերում և առևտրական բանուկ ճանապարհների վրա կառուցվում էին հզոր ամրոցներ և ռազմական հենակետեր, որոնք առաջին հերթին ապահովելու էին Երիախիի Բիայնիի տարվող արտադրական հումքի մատակարարման խնդիրը: Անրոցներում տեղակայված ուրարտական կայազորները ճնշելու էին տեղի բնակչության ապստամբության յուրաքանչյուր փորձ, իսկ ննան փորձեր կլինեին

կագրական տվյալների մասին ուսումնասիրություն ունի Գ.Արեշյանը (*Արքայի Դ.*, էջ 91-108):

Հայկից սերված ցեղերի և զավակների մասին խոսելիս Մովսես Խորենացին գրում է.«...Արամանյակը բոլոր բազմությունն առնելով չփում է դեպի հյուսիսային արևելք և գնում իշնում է մի խոր դաշտավայր, բարձրագագաթ լեռներով շրջապատված, որի միջով մի կարկաչասահ գետ էր անցնում արևմտյան կողմից. և դաշտը կարծես թեքված էր դեպի արևելք և երկարությամբ ճգփում էր արեգակի կողմը, իսկ լեռների ստորոտներում բխում էին բազմաթիվ ականակիտ աղբյուրներ, որոնք միանալով, գետեր կազմելով, հեզաքար հոսում էին նրանց սահմանների մոտ, լեռների ստորոտներով և դաշտի ափերով, որպես թե պատանիներ շրջեին երիտասարդուհիների մոտերը: Իսկ հարավային արեգակնածեմ լեռը, սպիտակափառ գագաթով, ուղիղ բռւտել էր երկրից՝ պինդ գոտևորված մարդու երեքօրյա ճանապարհի շրջապատով, ինչպես ասաց մերոնցից մեկը, և հետզհետեւ սրվում էր դեպի վեր. իսկապես մի ժերունի լեռ՝ երիտասարդացած լեռների մեջ: Արամանյակը այս խոր դաշտում բնակելով՝ շենցնում էր մի մասը դաշտի հյուսիսային կողմում և լեռան ստորոտը նույն կողմում, լեռն իր անվան հարմարեցնելով կոչում է Արագած, իսկ կալված՝ ոտն Արագածո» (*Սովուս Խորենացի*, I, ԺԲ): Ապա թերքողահայրը շարունակում է.«Բայց սքանչելի մի բան է ասում պատմագիրը [Մար-Աբաս Կատինան՝ Ի.Ա.], թե շատ տեղերում ցիրուցան բնակում էին սակավաթիվ մարդիկ մեր երկրում նախքան մեր բնիկ Հայկի գալուստը» (*Սովուս Խորենացի*, I, ԺԲ): Մովսես Խորենացին Հայկական լեռնաշխարհում հայկյանների տարածման մասին պատմելիս խոսում է նաև Շարային ու նրա տոհմին հանձնված գավառների մասին:«Նրա [Արամանյակի՝ Ի.Ա.] որդին՝ Արամայիսը իր բնակության համար տուն է շինում գետի ափին մի բլորի վրա և իր անունով կոչում է Արմավիր, իսկ գետը կոչում է Երասխ՝ իր թոռան Երաստի անունով: Իսկ իր որդուն, բազմազավակ և շատակեր Շարային ամբողջ աղխով ուղարկում է մի արգավանդ ու բերրի դաշտ, հյուսիսային լեռան՝ Արագածի թիկունքում, որտեղ շատ ջրեր են հոսում. նրա անունով, ասում են, գավառը կոչվեց Շիրակ» (*Սովուս Խորենացի*, I, ԺԲ):

---

միայն այն դեպքում, եթե ծանր պարտություններից որոշ ժամանակ հետո տեղի ստվար բնակչությունից ծնունդ առներ արական սերի ներկայացուցիչների մի նոր զանգված, որից էլ հավաքագրովէր նոր բանակ: Այս մասին են վկայում վերը նշված այն նորանոր արշավանքները, որոնք Սարդուրին ստիպված էր իրականացնել երիախի երկրի և նրա դաշնակիցների դեմ, որոնք կազմում էին եթունի համադաշնությունը:

Շարան ու իր հետնորդները բնակվում ու իրենց իշխանությանն են Ենթարկում Այրարատի Արշարունիք, Շիրակ, Աշոցք գավառներն ու Գուգարքի հարավային մեծ մասը: Այս եթոքաղաքական միավորը հայագետներին հայտնի է «Շարայի ցեղամիությունը»՝ 65-75, «Շարայի ցեղամիությունը»..., էջ 16):

Ք.ա. VIII-VI դ. Յայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան մասից ցեղերը, հետզհետեւ համախմբվելով, ստեղծել էին բավականին ուժեղ ցեղամիություններ: Դրանցից մեկի կենտրոնն էր հետագա Շիրակը, որի բնակչության անվանադիր-նախնին, նրա հավաքական կերպարի բանահյուսական անձնավորումն էր հայկազն Շարան: Պատմահորը հասած հայկական հին ավանդագրույթների համաձայն՝ Շարայից և նրա սերունդներից էին սերած վաղ միջնադարյան Յայաստանի Շիրակում, Արշարունիքում և Գուգարքում իշխած բուն հայկական ծագմանը նախարարական տոհմերը: Ըստ Ն.Աղոնցի՝ Շարան և Գուշարը պարզ անվանադիրներ են, և Շարան այնպես է վերաբերում Շիրակին, ինչպես Գուշարը՝ Գուգարքին (*Աղոնց Ն., Յայաստանը Ցուստիմիանոսի...*, էջ 472-473, ծան. 1): «Շարայի զարմերին» է վերաբերում Ստրաբոնի այն տեղեկությունը, համաձայն որի՝ «...քրակացիներից ունաճ, որ անվանվում են սարապարներ, այսինքն գլուխ կտրողներ, ապրում են Արմենիայից վերև և հարևան էին գուրանացիներին և մեղացիներին» (*Ստրաբոն, XI, 14, Երեմյան Ա., Կիմերական ու սկյուռական ցեղերի ...*, էջ 91, «*Պետրոսյան Ա., Շարայի ցեղամիությունը...*», էջ 66, «*Պետրոսյան Ա., Յացագիների մշակության...*», էջ 190-192, *Աղոնց Ն., Յայաստանը Ցուստիմիանոսի...*, էջ 472, ծան. 1): Այս առունով Ն.Աղոնցը գրում է. «Եթե ընդունենք, որ իրենց հարևան սիրակների հետ Յայաստան են զաղթել նաև սարապարները, ապա Շիրակի իշխանների՝ Կամսարականների տոհմական անունը մեզ կներկայանա նոր լույսի տակ: Sara-para նշանակում է տառացի գլուխ կտրող կամ հատող: Ըստ Մովսես Խորենացու՝ նույն նշանակությունն ունի «Կամսարը»՝ «պակաս գլուխ բոլորութիւն զագաթան»: Այս հիման վրա կարելի է Ենթադրել, որ Կամսարականները Շիրակ զաղթած սարապարների հաջորդներն են: Յետագայում, երբ Շիրակն անցավ Արշակունիների այն ծյուղին, որ հաստատվեց Արշարունիքում, նրան անցավ նաև Կամսարականների տոհմանունը...» (*Աղոնց Ն., Յայաստանը Ցուստիմիանոսի...*, էջ 472, ծան. 1):

թ. Սպանդարյանի (Ղուլիջան) արձանագրություն (աղ. II, նկ. 1) (տես *Դափանցյան Գր.*, էջ 168): Բացարձակ բարձրությունը 1823 մ,

40°39'42,8" հյուսիս, 44°0'52,9" արևելք, շրջանագիծը 7մ<sup>6</sup>: Ղուլիջանը (Կուլիջան, Սպանդարյան) գտնվում է Արագածի հյուսիսարևմտյան լանջին՝ Գյումրիից 21 կմ հարավ-արևելք (**ԿՅՀՀ178**): Սեպագիրը գտնվել է 1884 թ. Քառանգու (հայկական՝ Կարկաչան) գետի ժայռոտ ափի արևմտյան որմնախորշում: Արձանագրությունում հիշատակվող ուրարտական դարաշրջանի Կուլիանի ցեղանունը, ըստ սեպագրի հրատարակչի Ս. Նիկոլսկու, համարժեք է այժմյան Կուլիջան-Ղուլիջան գյուղանվան նախաձևին, որի մոտ է՝ ժայռի վրա, թողնվել է արձանագրությունը: Այս տեղի արքան պատմում է, որ Խալդը սեփական զենքով Ենթարկել է Կուլիանի ցեղի երկիրը և գգետնել Արգիշտիի առջև (1-3 տողեր): Ուրարտական արքաների հաղթական արձանագրություններին բնորոշ է այն, որ նրանց բոլոր արշավանքներում առաջնորդող Խալդի աստվածն է (4-րդ տող): Արձանագրության 5-7 տողերում արքան պատմում է, որ նվաճել է Ղուրութանի քաղաքը և Կուլիանի ցեղի երկիրը:

գ. Մարմաշենի արձանագրություն (աղ. II, նկ. 2) (հուշարձանի բացարձակ բարձրությունը 1620 մ, 40°50'28,6" հյուսիս, 43°46'02,1" արևելք, շրջանագիծը 7մ): Մարմաշենը՝ նախկին Ղանլիջա, գտնվում է Գյումրի քաղաքից 8 կմ հյուսիս-արևմուտքը (**Ղափանցյան Գր.**, էջ 168, տես՝ *Rössler Hr.*): Արձանագրությունը արված է գյուղի մերձակայքում՝ Ախուրյան գետի ձախափնյակում՝ Մարմաշենից մոտ 2 կմ արևմուտք գտնվող բարձրադիր բնական ապառաժի վրա, որտեղից երևում է Ախուրյանի հովտի ստորին հատվածներում տեղադրված Մարմաշենի վանքը: Այս քարաժայրի բարձրության վրա և նրա շուրջը պահպանվել են Վահրամ Պահլավունու բերդի ավերակները (**ԴՏԲ հ. III**, էջ 736, **ԴՏԲ հ. IV**, էջ 738). բերդի ստորոտում գտնվում է «Խաղայի գյոլ» կոչվող փոքրիկ լճակը: Ղերևան ճարտարապետ Թ. Թորամանյանը, ուսումնասիրելով բևեռագրի տարածքը, նշում է. «Բևեռագիրը անաղարտ պահպած էր տեղին վրա, բայց շրջապատը անխնամ վիճակի մեջ էր: Սկզբում բևեռագիրը, որ փորված է եղել մի բարձր մեծ ժայռի վրա, շրջապատված է եղել բնական և արվեստական շրջապատով, որով առանձնացած էր: Միայն մի նեղ մոլորով հնարավոր է եղել մտնել շրջափակին մեջ: Իբրև շրջափակ ծառայող բնական ժայռերը դեռ իրենց տեղում կմնան, իսկ արվեստական կերպով հարավարևելյան կողմին վրա շինված կիկլոպյան քարերով պատին միայն հետքն է մնացել հողին երեսը: Բևեռագիրը փորագրված ժայռեն դեպի հարավ շարունակության վրա, ինչպես նախաքրիստոնեական

<sup>6</sup> Չափումները կատարված են GPS-ով Ռ.Բիշոնեի կողմից, ինչի համար շնորհակալություն ենք հայտնում նրան:

բնակչությանց ուրիշ վայրերի մեջ, փորագրված են նույն խորհրդավոր բոլորակ փոսիկները, որոնց ամենից մեծը 10 սմ տրամագիծ ունի, իսկ մյուսները անհավասար մեծությամբ ավելի մանր են» (*Թորամանյան Թ.*, էջ 235): Թ. Թորամանյանի գրածից մեկ այլ կարևոր տեղեկություն է ենք քաղում այն մասին, որ «...Նախապես ուրարտական, իսկ հետո Վահրամ Պահլավունիի անվան վերագրված ամրոցի...Բերդակիր մեծ բլուրի արևմտյան կողմը, որ հեղեղատի կամ փոքր ձորի նմանություն ունի, նախորդ այցելության ժամանակ տեսել էի այս հեղեղատի ծայրում նի արվեստական մուտքի բերան, կամ մի անցք, որ գնում էր ուղիղ դեպի բերդի տակը: Դեռ այն ժամանակ ինձ հնար չեղավ այս անցքի խորքը մտնել, որովհետև թե ներսի փլվածքներից և թե դրսի հեղեղատներից լցվեր էին քարեր և հող, և մասամբ խափանել էին մուտքը, սակայն երևում էին մուտքի շինության համար երկու կողմի վրա կանգնված քարեր և կանգնված քարերի վրա ծածկված մեծամեծ սալաքարեր: Բայց այժմ, ինչպես կերպի, հեղեղատի մշտապես հոսումից բոլորովին փակված է մուտքի բերանը և տեղը հազիվ թե հայտնի է: Նախկին այցելության ժամանակ օյուղացի ծերեր հավաստում էին, որ այդ մուտքի հեղեղատի մոտերը ևս կա եղեր մի ավելի ընդարձակ քեռագիր արձանագրություն, սակայն անհայտացել էր դեռ այն ժամանակ, և չգիտեին թե ուր մնաց և ինչ եղավ» (*Թորամանյան Թ.*, էջ 235, 237): S. Դալայանը ենթադրում է, որ արձանագրությունը մնացել է հեղեղատի քարերի ու հողի տակ (*Դալայան Տ., Խ-զի-ցւ-և Երկիրը...*, էջ 35, ծան. 3): Սարմաշենի արձանագրության մեջ (1-5 տողեր) Արգիշտին պատմում է, որ Խալդյան մեծությամբ նվաճել է Երիախի ցեղի երկիրը, գրավել Իրդանիունի քաղաքը մինչև հշկիգուլու:

Չնայած սեպագիր աղբյուրում բացակայում է Արգիշտիի հայրանունը, սակայն կասկածի նշույլ անգամ չկա, որ հեղինակը Արգիշտի I-ն է, քանի որ նույն բովանդակությամբ տեքստը, աննշան խմբագրմանք, կրկնվում է Խորխորյան տարեգրության համապատասխան հատվածում: Խորխորյան տարեգրության մեջ Երիախին ստանում է ո-«ցեղ» ցուցիչը (դետերմինատիվ), իսկ Սարդուրյան տարեգրությունում՝ ինչպես ո-«ցեղ», այնպես էլ KUR-«Երկիր» ցուցիչները: Խորխորյան տարեգրության տեքստի հետ համեմատելով՝ կտեսնենք, որ հինգերորդ տողի «մինչև» նախդիրից առաջ բաց է թողնված «(ես) հասա» բառը (*ԿՅՀՀ*179):

Ուսումնասիրողների մի մասը Իրդանիունի/ «քաղաքը» տեղադրում է Գյումրի քաղաքից ոչ հեռու՝ Շիրակում՝ Մարմաշեն-Վահրամաբերդ

շրջանում: Ն. Յարությունյանը և Ս. Դմայակյանը այն տեղադրում են ճորիսի ստորին հոսանքի շրջանում և նույնացնում հայկական Արդվիճի հետ (տես՝ քարտեզ աղ. I): Ս. Պետրոսյանը և Հ. Կարագյոյանը այն տեղադրում են Գյումրու տարածքում և նույնացնում «Կումայրի» հնավայրի հետ (*Կարագյան ՕԵ.*, էջ 54): Ս. Պետրոսյանի կարծիքով՝ Irdanius-քաղաքանունն ունի գետանվանական ծագում, և բնակավայրն այդ անունը կրելու էր \*Irdan-կոչված գետի ափին գտնվելու պատճառով, իսկ մեր պատմության սեպագրային շրջանից հայտնի են գետանվանական ծագմանը մի շարք քաղաքանուններ: \*Irdan-գետանվան ձառ-քաղադրիչը «գետ, ջուր» է նշանակում և առկա է մերձսևնովյան շրջանների մի շարք հնագույն գետանուններում՝ «Դոն», «Դանուբ» (Պետրոսյան Ս., *IRDANIUS/NI/ բնակավայրի...*, էջ 18-19): \*Irdan-գետանվան առաջին բաղադրիչը \*ir-ը, ուսումնասիրողը բիւցնում է հնդեվրոպական \*er/\*or-արմատից, որից ծագած համապատասխան բառերն ազգակից լեզուներում ունեն «թրչուն», «արծիվ» իմաստը: Յայերեն «որոր», «ուլուր» արծվանուն գետեր կային և կամ հնդեվրոպական աշխարհի բոլոր մասերում (Պետրոսյան Ս., *IRDANIUS/NI/ բնակավայրի...*, էջ 18-19): Հին Շիրակում և հարակից շրջաններում գիշատիչ թռչունների բազմաքանակությունը և նրանց տոտեմական պաշտամունքը պետք է լինեին այդպիսի բովանդակությամբ տեղանունների ստեղծնան գլխավոր պատճառը (Պետրոսյան Ս., *IRDANIUS/NI/ բնակավայրի...*, էջ 18-19): Ս. Պետրոսյանի կարծիքով՝ սա հայերենի տեղանվանակերտ վերջածանցներից է հետագայում վերածված-«նի» տեղանվանակերտի (Պետրոսյան Ս., *IRDANIUS/NI/ բնակավայրի...*, էջ 19-20): Իրդանիունի/ բնակավայրի հետ նույնացվող «Կումայրի» հնավայրը գտնվում է Գյումրիի քաղաքի արևմտյան մասում «Զարկրզի ձոր» (Զարկրզ-ձոր) կոչվող գետակի ձախ ափին, և ըստ Ս. Պետրոսյանի՝ անվան ստուգաբանությունը կասկածից դուրս է թռղնում \*Irdan-գետանվան և Irdanius-քաղաքանվան «թրչնային» ստուգաբանության հանգամանքը: Զորանվան հիմքում ընկած է արծիվ նշանակող արևելահրանական «չարկաս» բառը (Պետրոսյան Ս., *IRDANIUS/NI/ բնակավայրի...*, էջ 20): Զորի և գետակի միևնույն անունը կրելու տեսանկյունից կարելի է համեմատել Ամձախի ձոր, Ծաղկոցձոր, Ծանախոյ ձոր գետանունները, ինչը հիմք է տալիս Ս. Պետրոսյանին Զարկրզ ձոր գետակը համարելու սեպագրային շրջանի \*Irdan գետը, իսկ նրա ափին գտնվող «Կումայրի» հնավայրի նույնացումը Irdanius-քաղաքի հետ համարելու վերջնական: Արևելահրանական ծագմանը «չարկաս» (արծիվ) բառը Շիրակում հայտնվել կարող էր III դ. այս-

տեղ հաստատված Կարենյան-Կամսարական տոհմի և նրանց ուղեկցած «պարթևական» գաղթականության միջոցով (Պետրոսյան Ա., IRDANIUS/N/ բնակավայրի..., էջ 19-20):

Ըստ այն տեսակետի, թե Իրդանիու քաղաքը եղել է Երիախի Երկրի կենտրոնը, ապա այն գտնվելու էր հետագայի Շիրակի կենտրոն Կումայրիի տեղում կամ մոտակայքում: Իրդանիու քաղաքի արվարձաններից մեկը, որը կրել է Կումայրի անունը և զարգացում է ապրել, իր անունը տարածել է նաև նախկին Իրդանիու բնակավայրի վրա (Կարագյոզյան Դ., էջ 13): Դ.Կարագյոզյանը Կումայրի տեղանունը ստուգաբանում է այսպես. Կում-Կոմ նշանակում է բնակավայր, գյուղ, այրի, այր Երկրորդ քաղաքի-ը նույնապես նշանակում է գյուղ, բնակավայր, Կումայրի նշանակում է ինչոր մի բնակավայրի արվարձան՝ Իրդանիու քաղաքի արվարձան (Կարագյոզյան Դ., էջ 13-14): Ս. Երեմյանը գտնում է, որ այն վայրը, որտեղ Ուռասալը առաջին անգամ հանդիպել է կիմերներին և պարտություն կրել, կոչվել է Կումայրի (Վրացերեն՝ Գումբրի), իսկ Աշուրիսուայի հիշատակած Գամիռան, որը հարկատու էր Ուրարտուին, համապատասխանում էր նախկին Լենինականի շրջանին (Երեմյան Ա., Դայերի ցեղային միությունը..., էջ 92): Կումայրի անվանքը բնակավայրը հիշատակվում է նաև Ք.հ. VIII դ. պատմիչ Ղևոնդի կողմից 774 թ. հակաարաբական ապստամբության առիթով «...հասաներ ի գավառն Շիրակ ի գիւղն Կումայրի» (Ղևոնդ, էջ 138): Դայ մատենագրության մեջ Կումայրին (Կումրի ծևով) կրկին հիշվում է 1209 թ. իրու գյուղաբաղաք: ՄՄ պահպանված մի ձեռագիր հիշատակարանում (թիվ 1886, 1 թերթ) ասվում է.«Ես մեղուցեալս և յետինս ի կրոնաւորս Ուվասափս, որ էի ազգավ և տոհմիվ ի մեծ գեաւղաքաղաքէն Կումիրոյ...», այսինքն՝ 1209 թ. Կումայրին գյուղաբաղաք էր, այն էլ մեծ, և քանի որ հետայսու Կումայրի, Կումիրի կամ որևէ այլ անվանումով մինչև XIX դ. սկիզբը այն չի հիշատակվում ոչ Բագրատունիների շրջանի գյուղաքաղաքների մեջ և ոչ էլ Սիմեոն կաթողիկոսի կողմից կազմված «Զամբռում», հետևաբար ՄՄ վերոհիշյալ ձեռագիրը՝ ոմն Հովհաննեսի մասին, իրավանք կարելի է համարել Կումայրու՝ որպես գյուղաբաղաքի միակ վկայագիրը հայ պատմագրության մեջ (Դայրապետյան Ա., Կումայրի-Գյումրին..., էջ 15): Կումիրոյ-Կումիրի ձև առաջանում է Կումերի չվկայված ձևից, իսկ Կումայրի ձևը բարբառայնացվելով տվել էր Կումերի>Կումիրի>Կումրի>Գումրի>Գյումրի (Դայրապետյան Ա., Կումայրի-Գյումրին..., էջ 15): Որոշ ուսումնասիրողներ Կումայրի-Կումիրի տեղանվանաձևը բիւցնում են կիմերի-կիմեր ցեղանունից (Երեմյան Ա.Տ., Դայերի ցեղային միությունը..., էջ 91, Դարությունյան Ն., Դիմ հայկական տեղանուններն ու ցեղանուննե-

**ո՛ռ...**, էջ 24՝ այս ամենը փաստագրելով ք.ա. 714 թ. Ռուսա լ-ի՝ կիմերների դեմ տված ճակատանարտով։ Այնուհետև բնակավայրը կրկին հիշատակվում է միայն XIX դարասկզբին, այս անգամ արդեն Գյումրի կամ Գումրի ծևով կապված իշխան Ցիցիանովի Երևանյան առաջին արշավանքի հետ (*Դայրապետյան Ա., Կումայրի-Գյումրին...*, էջ 15)։ Շիրակում և հարևան տարածքներում սկսութերի առկայության նասին երկրորդ տեղեկությունը դարձյալ հաղորդում է Ստրաբոնը (I դ.) (*Ստրաբոն*, XI, 5, 8)։ Ըստ նրա՝ Սև և Կասպից ծովերի միջև ընկած տարածության վրա թափառող ցեղերից ամենամեծաթիվն ու ուժեղները՝ սիրակներն ու առսները, հյուսիսից իշխում էին հարավ և չփման մեջ մտնում հայերի ու մարերի հետ։ «Առսները բնակվում են Տանայիսի երկարությամբ, իսկ սիրակները՝ Աքարդես գետի, որ Կովկասից հոսելով Մայոտիս է թափվում» (*Ստրաբոն*, XI, 5, 8)։ Անանիա Շիրակացին այս սիրակներին կոչում է սյունակացիներ և տեղադրում Տանայիսի գետաբերանից ոչ հեռու՝ Կողարջք ցեղի հարևանությամբ։ Սիրակները և առսները կարող էին իրենց անվանումները թողնել Շիրակ և Աշշարունիք (Աշարունիք) գավառներում (*Դայրայան Տ., Ալյութական ցեղերը Շիրակում...*, էջ 11)։ Շիրակի հարևան Վանանդում՝ Աշոցքի և Զավախսի սահմանների մոտ էին գտվում ալանական ծագման Առավելյան տոհմի տիրուվրեները։ Յաշկի առնելով Զավախսը գավառանվան հնչումը ուրարտական սեպագրերում Զարախա ծևով՝ S. Դալայանը գավառանունը հանգեցնում է օսերեն «Ճարախ»՝ «լավ, բարեբեր» բառից և հիշեցնում, որ Զավախսի ու հարևան շրջանների նախահայրը Գուշարն է՝ Շարայի սերունդներից, իսկ սարաւոկ ցեղանունը, առավել, քան նրա տարբերակ սիրակը, մոտ է Արշարունիք գավառանվանն ու Շիրակի անվանադիր նախնու՝ Շարայի անվանը (*Դայրայան Տ., Ալյութական ցեղերը Շիրակում...*, էջ 12)։ Շարան, հայոց ծագումնաբանության համաձայն, Դայրկի թուռն էր, և Շիրակի ու հարևան գավառների հին բնակչությունը հայոց ավանդական պատկերացումներում համարվում էր տեղաբնիկ ու հայերին ցեղակից (*Դայրայան Տ., Ալյութական ցեղերը Շիրակում...*, էջ 12)։

Ն. Դարրությունյանը չի համաձայնում արմատավորված այս կարծիքին։ Նա գտնում է, որ սխալ է Իրդանիունին Երիախսիի կենտրոն համարելը։ Մարմաշենի արձանագրության տվյալները համադրելով Խորխորյան տարեգրության V, 47-49 տողերին՝ նա գրում է. «Դժվար է համաձայնվել այն արմատացած կարծիքի հետ, թե Իրդանիունին Երիախս երկրի կենտրոնն է, այն անկասկած Քարաղզա Երկիրի կենտրոնն է» (*ԿԿՀ/179, Արցունիք Ի., Բնանալս*, էջ 232-233)։ Ի տարբերություն Մարմաշենի արձանագրության՝ Խորխորյան տարեգրությունում (*ԿԿՀ*

/173 V) նույն տեղեկությունը բերվում է հետևյալ կերպ. «(47) Արշավեցի երիունի (Երկրի) վրա, գրավեցի (48) Երիախի (ցեղի) Երկիրը, Քարարզա (ցեղի) Երկիրը, (49) Կտրում էի մինչև Իշկիգուլու (Երկիրը): (50) Սարդ, կին հանցի դեաի Բիայնիլի (Երկիրը):»:

Մի դեպքում Իրդանիունի քաղաքի անվանումն է, մյուս դեպքում՝ Քարարզա Երկրի:

Արգիշտի I, Վանի թանգարան, ազաքե ուլումը CTU IV, D 8-1 (CTU IV, էջ 253): Ուլունքի տրամագիծն է 2,4-2,2 սմ:

Այս ուլունքն ունի արձանագրություն, որի բովանդակությունից ինանում ենք, որ արքան այն նվիրել է Արուբանի աստվածութուն որպես Երիախի Երկրից բերված ընծառ. «Իր աստվածութի Ուարուբանին Արգիշտին Երիախի Երկրի ընծառ բերեց»: Արքան այս ուլունքը բերել էր Երիախի կատարած արշավանքներից մեկից հետո: Ազաքի Երևակումները հիմնականում կենտրոնացված են Շիրակի Զրածոր գյուղի մերձակա լեռներում (աղ. III, նկ. 1) և Ախուրյանի Կիրճի ալյուվիալային նստվածքներում. այս Ելքերից արդյունահանված հանքարդից են պատրաստվել Շիրակի ուշ բրոնզ-վաղ Երկարեղարյան, միջին Երկարեղարյան հուշարձաններից հայտնի զարդերը: Ինչ վերաբերում է կիսարանկարժեք քարերին, ապա ակնհայտ է, որ Երիախիում հատկապես հարգի է Եղել ագարք, որից էլ պատրաստվել էր աստվածութուն նվիրված ուլունքը: Ուլունքը պատհական գտածն է, որը պահպանվում է Վանի թարգարանում (աղ. III, նկ.2):

Սարդուրյան տարեգրությունը KYKH 241 գտնվում է Վանա ժայռի հյուսիսային լանջին՝ արևմտյան որմնախորշում, որը կոչվում է Գանձադուռ (Խազինե կափուսի) (89, էջ 174)<sup>7</sup>: Տարեգրությունը ներկայացված է «ա» և «բ» մասերով. «ա» մասը բաղկացած է A և G սեպագիր հատվածներից, որոնցից A-ն հատվել է որմնախորշի արևելյան, իսկ G-ն՝ հարավային պատին: Տարեգրության «բ» մասը արվել է քառակորողի (ստելա) հիմքի (ծազա) և կողերի վրա: B-ն հատվել է քառակորողի ծախ կողին, C-ն՝ առջևի, D-ն՝ աջ, E-ն՝ հետևի կողին, F-ը հատվել է քառակորողի հիմքի առջևի մասում (KYKH/241): Սարդուրյան տարեգրության տեքստին է պատկանում նաև Վանի Ս.Պողոս Եկեղեցում գտնված Երկու քարերի վրա

<sup>7</sup> 1916թ. Յ.Օրբելին Վանա ժայռի որմնախորշերից մեկում «Գանձադուռ», պեղեց Արգիշտի I-ի որդի Սարդուրի II-ի տարեգրությունը: Այս հյուակապ հուշարձանը իր նշանակությամբ և չափով կարող է համեմատվել միայն Արգիշտի I-ի Խորխորյան տարեգրության հետ, որը հատվել է Վանա ժայռի հարավային կողմում (Պատորուսկու Ծ., Վանսկու պարտու, էջ 15):

արված արձանագրությունը, որը տարեգրության որոշ մասերի կրկնօրինակն է համարվում (**ԿՅԿՀ/242**): Սարդուրյան տարեգրության մեջ Երիախի Երկիրը հիշատակվում է մի քանի անգամ: Կան հատվածներ, որոնցից հասկանալի է դաշնում, որ տվյալ տարում արքան ստիպված է եղել Երեք արշավանք ձեռնարկել Երիախի դեմ: Վավերագիրը բավականին տեղեկություններ է տալիս Երիախի Երկրի ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, կրոնամշակութային կյանքի մասին:

Սարդուրյան տարեգրության ԿՅԿՀ 241 B հատվածի (1-7 տողեր) հրչակագրում Մանա Երկրի հետ առաջին անգամ հիշատակվում է Երիախի ցեղամիության Երկիրը (**ԿՅԿՀ/241**, ծան. 17): Սարդուրին (Ք.ա 764-735թթ.) պատմում է, որ Խալդին արշավել և սեփական գենքով Ենթարկել է Մանա Երկիրը, Երիախի ցեղամիության Երկիրը, որոնք գգետնել է Սարդուրի Արգիշտիորդու առջև (1-7 տողեր): 8-12 տողերում, փառաբանելով Խալդիի զրորությունը, զենքի ուժը, որի օգնությամբ Սարդուրին արշավել է, նա նկարագրում է Մանա Երկիր կատարած արշավանքը (13-27 տողեր), որից իմանում ենք, որ քաղաքները այրելով ու ավերելով, գրոհելով ամրացված Դարբանի քաղաքի ամրոցը և այստեղ բերդակալ նշանակելով, ապա մարդ-կին քշելով Բիայնիլի՝ արքան Երկիրը միացրել է Վանի թագավորությանը: Ենց այդ նույն տարում (28-36 տողեր) Երրորդ անգամ արքան զինվորներին ուղարկել էր Երիախի Երկիր, Երկիրը գրավել, քաղաքները այրել, ավերել, Երկիրը յուրացրել, մարդ, կին քշել դեպի Բիայնիլի Երկիրը: 37-50 տողերում, Խալդյան մեծությամբ Սարդուրին պատմում է, թե ինչ ավար է նա տարել ամբողջ արշավանքի ընթացքում Մանայից և Երեք անգամ (°) Երիախի արշավելուց հետո՝ 3225 պատանի, 4928 կին, ընդամենը՝ 8153 մարդ: Բնական է, որ ոմանց նա պիտի սպաներ, ոմանց կենդանի տաներ: Տվյալ հատվածը տեղեկություններ չի պարունակում Մանայից և Երիախիից գերված տղամարդկանց մասին: Անասնաքանակի մասին տվյալներն են՝ 412 ծի, 6665 խոշոր Եղշերավոր անասուն, 25735 ոչխար (**ԿՅԿՀ/241 B**):

Հատվածի 27-28 տողերից իմանում ենք, որ Սարդուրին ստիպված է եղել այդ տարում Երրորդ անգամ զրոր ուղարկել Երիախի, 51-56 տողերից՝ որ Խալդիի փոխարեն սույն մեծագործությունները արքան մեկ տարում է կատարել: 57-59 տողերում արքան խոսում է հենց այս տեղից (ժամանակից) «*Նախիդիի» հաստատվելու մասին*<sup>8</sup>:

Մյուս անգամ Սարդուրյան տարեգրության C հատվածում (**ԿՅԿՀ/241 C**) Սարդուրին պատմում է նույն տարում Կուլիսա Երկիր և Ա-

<sup>8</sup> Ըստ Ի. Ղյակոնովի՝ ուղարկությունը պահպանվում է անհաջողությամբ: Այս գործությունը կատարվել է մասնակի կողմէ 1930 թ. ապրիլի 15-ին: Այս գործությունը պահպանվում է անհաջողությամբ: Այս գործությունը կատարվել է մասնակի կողմէ 1930 թ. ապրիլի 15-ին:

բիլիանիխի կատարած արշավանքների մասին (1-19 տողեր): Յաջորդ տարի արքան միևնույն տարում արշավում է Երիախի, Արիլիանիխի և հգանի Երկրների դեմ, որի ժամանակ հպատակություն են հայտնում այս ցեղերի արքաները (**ԿՅԿԽ/241 C**): Արշավանքի գլխավոր հրչակագրում (19-22) Սարդուրին պատմում է, որ Խալդին արշավել և սեփական գենքին է Ենթարկել Երիախի ցեղի Երկիրը, Ենթարկել Արիլիանիխի ցեղի Երկիրը, զգեստնել նրանց Արգիշտորդի Սարդուրիի առջև (**ԿՅԿԽ/241 C**):

Ապա արքան պատմում է Երիախի Երկիր կատարած արշավանքի մասին (23-47 տողեր), որի ժամանակ նրան հաջողվել է մեկ օրում գրավել Երիախի Երկիրը, նվաճել Երիախի 350 գաղտնի շտեմարանները, որոնք ստեղծել էին Երիախի հարստության ներկայացուցիչները՝ հպատակված արքայի հայրը և պապը: Ուշագրավ է պետության և տաճարների ունեցվածքի հասանելիության խնդիրը: Երիախիում տաճարի և արքայի ունեցվածքը պահպում էր ժայռափոր պահեստներում (**Դմայակյամ Ա., Ուրարտուի ուկին**, էջ 159): Երիախի տիրակալն ունեցել է «քագավոր-արքա» տիտղոսը, արձանագրությունն ակնարկում է ազգագավառի՝ մի քանի սերունդ տիրող արքայատոհմի գոյության մասին: Շիրակի տարածքում ձևավորված վեց իշխանությունների մեջ գերակշռող դեր է խաղում Երիախին, որը կառավարվում էր տեղական հարստության կողմից: Այսպիսով, մենք գործ ունենք «Սեծ» Երիախիի հետ, որը վեց իշխանությունների համադաշնություն էր և իրենից ներկայացնում էր քագավորություն, և «Փոքր» Երիախիի հետ, որը կարողացել էր իր շուրջը համախմբել մյուս իշխանությունները: Այդ վեց իշխանություններն են՝ 1. Երիախին, որը տեղադրվում է Ախուրյանի ձախ ափին՝ այժմյան Ախուրյանի շրջանի և Գյումրի քաղաքի տարածքում: Այն, ըստ Երևանյանի, վեց իշխանություններից ամենազորեղն էր ու կենտրոնականը: 2.Կուլիանին, որը տեղադրվում է Արթիկի շրջանում: 3.Կուրիանին, որը տեղադրվում է այժմյան Անիի շրջանում և Գուրիանիա ձևով հիշատակվում Աշուրիսուայի կողմից Սարգոն II-ին ուղարկված գեկույցում: 4.Գուլութախին, որը տեղադրվում է Արաքսի հյուսիսային և Ախուրյանի արևմտյան ափին: 5.Անշերգան, որը նույնպես տեղադրվում է Արաքսի հյուսիսային ափին՝ Գուլութախիի հարևանությանը՝ պատմական Արշարունիքում, որը մինչև Ք.ա. IV դ. նաև էր Շիրակի: 6.Աշտուիխնին, որը տեղադրվում է Ախուրյան գետի արևմտյան ափին՝ Սարիդամիշից հյուսիս (**Դմայակյամ Ա., Շիրակը Լուշա-Կատարգա-Վիտերուինե...,** էջ 21-23): Բացի սրանից՝ անհրաժեշտ է հիշատակել նաև Իշկիգուլու-Իշկիգուլխի Երկիրը, որը, ըստ Արգիշտիի՝ Մարմաշենի արձանագրության, տեղադրվում է Շիրակի

հյուսիսում: *Կուլշ -գի-ցու-լս-ս-ի* առավել ճշգրիտ տեղորոշմանը կօգնի իր-դանիունի/քաղաքի տեղադրության հաջի լուծումը, որը մինչև օրս վերջնականապես պարզ չէ:

Երիախիի գաղտնի ամբարները, որոնք լեցուն էին հարստությանը (27-28 տողեր), երբեւ չէին գրավվել Վանի հզոր արքաների կողմից և այնքան կարևոր նշանակություն ունեին, որ Սարդուրին այս մասին տեղ է հատկացրել իր տարեգրությունում: Ա.Յնայակյանը, հենվելով (Ե.Մուրել) բարի՝ Ի.Դյակոնովի առաջարկած «Տաճարի ամբարներ» թարգմանության վրա, ենթադրում է, որ Երիախիի արքան երկրի կրոնական առաջնորդն է եղել: Բացառված չէ երկրի թեոկրատական իշխանապետություն եղած լինելու հանգամանքը, ինչպիսին էր ըստ եւրիշան նաև Վանի թագավորությունը (*Դմայակյան Ս., Երիախին՝ աստվածապետություն*, էջ 12-13): «Տաճարի ամբարներ» թարգմանությունը հավանական է, քանի որ Շարան, որին ըստ ավանդության, պատկանել են այդ ամբարները, տարածաշրջանում պաշտվել է որպես հաջի և հացագիների, պտղաբերության և բերրիության աստվածություն (*Պետրոսյան Ս., Դացագիների մշակության...*, էջ 187-204, *Պետրոսյան Ս., «Ծիրակայ ամրարք»-ի շուրջ*, էջ 73-79). գրեթե նման գժերով է օժտված եղել նաև Շարայի մայրը: Պտղաբերության՝ Ծիրակում գյոյություն ունեցող պաշտամունքի մասին են վկայում Շատակեր Շարայի մասին պատմվող մի շարք առասպելներն ու ավանդությունները (*Սովես Խորենացի*, I, ժբ): Պահպանվել է մի ավանդություն այն մասին, թե ինչու է Կողմար լեռը ստացել Շարայի լեռ անունը: Յին Դայաստանում ամենքը գիտեին Ծիրակի տեր Շարայի որկրամոլության մասին: Ամռանը՝ կալը կալսելու ժամանակ, նա մի քանի սայլ ցորեն է բերում և թաքցնում այս լեռան փոքրիկ անձավում: Շարան մտադիր էր ձնոանը մեկ-մեկ այստեղ գալ և մարդկանց հայացքից հեռու կշտացնել փորը: Երբ ձմեռը վրա է հասնում, գաղտագողի գալիս է իր թաքստոցը, նստում է անձավում ու մտածում իր անելիքի մասին: Յենց այնպես ցորմահատիկներն ուտելը բանի նման չէ, բայց մինչև տանես, աղաս ու հաց թխես, ամենքը գլխի կընկ-նեն: Այդ պահին նրա աչքին երևում է մայրը (Շարայի մոր դիցարանական բնույթի մասին կիսուենք ստորև), որն ասում է.«Տղան, աստվածները կպատժեն այն մարդուն, որը հաջի է նստում որդիներից ծածուկ»: Շարան սթափկում է, վերադաշնում տուն և իրամայում, որ գնան ու լեռան անձավից ցորենը տուն բերեն: Այդ ժամանակվանից էլ Կողմարը կոչվել է Շարայի լեռ (*ԴՄՀ*, էջ 462): Ավանդագրույցից տեղեկանում ենք Շարայի պաշտամունքի և Ծիրակի տնտեսության՝ երկրագործության

մասին: Ըստ ուսումնասիրողների՝ սեպագիր և հիերոգլիֆային տեքստերի մանրազնին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայկական Շարան զուտ տեղական երևույթ չէ, այլ և անվանական, և վարքագծային առումներով իր զուգահեռներն ունի հին արևելյան դյուցազնավեպերում: Շումերական տեքստերում Շարան (Շարու) Ումնա քաղաքի պահապանն է՝ Ինաննա (աքքադական՝ Իշտար) դիցուիու որդին կամ տարփածուն, ինչպես նաև հարստության աստվածը: Ինքը՝ Ինաննան, այդ պարագայում տաճարական շտեմարանների հովանավորն է: Ուշագրավ են Իշտարի խեթական և խուրիական առանձնահատկությունները (**Փիլիպոսյան Ա., Քայլական Շարան...**, էջ 24, **Թույան Ա.**, էջ 322-323, **Դմայկան Հ., Խուրիական Տեսական**<sup>Շա(ա)ս(կ)ա...</sup>, էջ 235-238):

Երիախի երկրի անասունները և ունեցվածքը խլելով, քաղաքները այրելով, պետությունը թալանելով՝ Սարդուրին տղամարդկանց ու կանանց գերեվարել է Բիայնիլի (**ԿՅՀՀ/241** Ծ տող 30-34):

Նույն արշավանքի վերջում՝ Երիախիից հետ դառնալու ճանապարհին, արքան դարձյալ արշավում է Արիլիանիին, քաղաքները այրում, երկիրը յուրացնում (35-39 տողեր): Սեպագիր հատվածից իմանում ենք, որ Սարդուրին դեմ կանգնած էին Երիունի համադաշնության երկու հզոր երկրների՝ Երիախիի և Արիլիանիիսի արքաները: Երիախիի դեպքում Սարդուրին գործ է ունեցել արքայական հարստության հետ, քանի որ նա հիշատակում է արքայի հորը և պապին, իսկ Արիլիանիիսի դեպքում Սարդուրին հիշատակում է Արիլիանիսի արքա Մուրինիին, որը, գալով իր մոտ, գրկել էր իր ոտքերը, բերանքսիվայր խոնարիվել և արյունքում՝ հարկ վճարելու պայմանով, հետ ստացել թալանված Արիլիանիսի գահը: Կարելի է եզրակացնել, որ Կուլխա կատարած արշավանքի տարրում արքան արշավել է Արիլիանիսի և հապատակեցրել երկիրը, սակայն հաջորդ տարի, միգուցե Երիախիի արքայի դրդմամբ, Մուրինի Արիլիանորդին դարձյալ ընդդիմացել է Սարդուրիին: Նոր արշավանքի արդյունքում ապստամբությունը ճնշվել է:

Ը հատվածի հաջորդ մասում (40-48 տողեր) գերեվարվածների մասին Սարդուրի հայտնած թվային հանրագումարային տվյալը հետևյալն է՝ 7150 մարդ մեկ տարում, որոնց արքան գերել էր Երիախիից և Արիլիանիից: Ոնանց Սարդուրին սպանել էր, մյուսներին կենդանի գերեվարել: Մեծ էր նաև տարված անասնաքանակը՝ 500 ծի, 8560 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 25170 գլուխ մանր եղջերավոր անասուն, բայց հատվածի կարևոր տեղեկությունը (45-46 տողեր) նաև այն է, որ սա միայն թագավորի ավարն էր, և Սարդուրին գրում է, որ սա այն է, ինչ նա

Է տարել, իսկ այն, ինչ իրենց հետո տարվել էր գինվորների կողմից, այս թվերի մեջ չեր մտնում և տարվել էր առանձին, այն բանից հետո, երբ Սարդուրին լքել էր երկրները: Շատ հավանական է, որ Սարդուրին չեր կարող իմանալ, թե իր բացակայությունից հետո գինվորները ինչքան պար էին տարել: Հաջորդ (47-48) տողերում Սարդուրին ևս մեկ անգամ նշում է, որ սույն մեծագործությունները նա կատարել է մեկ տարում: Հաջորդ (49-53) տողերից մենք հասկանում ենք, որ հաջորդ տարում արքան արշավել էր Ոուիշիանի և Իզանի երկրների դեմ: Վերջինս տեղակայվում է Վանանդում և Երիախի համադաշնության դաշնակիցն էր ու նաև Եթիուխի մեջ մտնող երկրներից մեկը: Հատվածի մեջ Սարդուրին հիշատակում է հպատակեցրած երկրների արքաներին՝ Ուշունի երկրի Ոուիշիանի արքային (50-51 տողեր), Դիուժինի Եյանորդի արքային (51-52 տողեր): Այս երկու երկրները, ինչպես նաև Եթիուխի երկիրը, Խալդին զգեստնել էր Սարդուրի Արգիշտորդու առջև (52-53 տողեր): Ուշագրավ են 54-55 տողերը, որտեղ Սարդուրին ասում է որ.«Հենց այս տեղից (ժամանակից) «ազերե» բուն «խալարե» հաստատված է<sup>9</sup>: Բացառված չէ, որ 54-55 տողերը կարելի է թարգմանել նաև այսպես.«Սարդուրին ասում է. Այնտեղ օրենք (պայմանագիր) խաղաղության, մյուս կողմից, հաստատեց»: Այսինքն՝ խոսքը Եթիուխի երկրի համադաշնության և Բիայնիլի միջև օրենք՝ հաշտության պայմանագիր, հաստատելու մասին է: Արձանագրության՝ մեզ հետաքրքրող հատվածում Սարդուրին խոսում է Եթիուխի համադաշնության մեջ մտած Եթիախի և Արիլիանիխի հզոր ցեղանիությունները հպատակեցնելու մասին, ընդ որում Արիլիանիխի արքան նվաճել է Եթիախից հետ վերադառնալիս: Թուլացնելով և ենթարկելով այս հզոր ցեղանիությունները՝ արքան ստիպված էր բախվել նաև Եթիուխի համադաշնության հյուսիս-արևմուտքում գտնվող Իզանի-Եյանիի և նրա դաշնակից Ոուիշիանի երկրի հետ, ինչի մասին էլ Սարդուրին պատմում է: Այս բախումից հետո միայն, երբ Սարդուրին նվաճում, այրում և թալանում է Եթիունի հյուսիս-արևմուտքը, տեղի է ունենում Եթիունի-Եթիուխիի և Բիայնիլի միջև հաշտության պայմանագրի կնքում ու հաստատում: Կարծում ենք, որ տարածաշրջանում պարտությունն էին կրել հզոր ուժ ներկայացնող Եթիունյան երկրները, և պարտությունն էլ դարձել էր հաշտության պայմանագիր կնքելու հիմնական պատճառ:

<sup>9</sup> 54-55 տողերը թարգմանել ենք ըստ ՀԺՊ քթեստոմատիայի (էջ 177): Տե՛ս ΥԿՀ/127 ծան. 16, ԿԿՀ-ում Ն. Հարությունյանը չի թարգմանում:

Սարդուրյան տարեգրության ԿΥՀՀ-241 ԍ հատվածում արքան խոսում է Կուլիսայի և Երիախիի հարավարևմտյան հարևան, Արաքսի աջ ափին տեղադրված Ուխտերուկսի Երկրների գրավման մասին: Կուլիսա արշավելու համար արքան նախ պետք է հայտակեցներ Երիախին և Իգանին, ինչպես տեսանք վերը, քանի որ Կուլիսա գնացող կարևոր մայրուղիներն ու ճանապարհները անցնում էին պատմական Շիրակով ու Վանանդով: Սարդուրին պատմում է այդ տարում Ուխտերուկսի կատարած Երրորդ արշավանքի մասին, որի ժամանակ արքան Երեք անգամ Ուխտերուկսի Երեք տարբեր վայրերում քախվել էր Երկրի Երեք մարզերի կառավարիչներին (18-23): Դադանակայից հետո արքան Ուխտերուկսի կառավարիչ է Շանակում (31-32) (**ԿՅՀՀ-241** ծան. 18) և Ուխտերուկսի կենտրոն Ուրայանի քաղաքում հիմնադրում է ամրոց, տեղադրում կայազոր (28-30): Ուխտերուկսի ստրատեգիական դիրքը խոսում է այն մասին, որ այս ամրությունն ու կայագործ այստեղ թողնվել էին ոչ միայն այս Երկիրը, այլև պարբերաբար ապստամբող հյուսիսային ազգագավառները Վանի թագավորության կազմում պահելու համար:

Սարդուրյան տարեգրությունում Երիախի մասին հաջորդ հիշատակությունը սեպագրի ԿՅՀՀ-241 Ե հատվածի 19-30 տողերում է: Փուլուադի կատարած արշավանքից հետո Սարդուրին, դարձալ այդ տարում Երրորդ անգամ, արշավում է Երիախի Երկիր, նվաճում է Երկիրը, քաղաքները այրում և ավերում, Երկիրը թալանում, տղամարդկանց և կանանց գերեվարում Բիանիի: Այս հատվածի կարևոր տեղեկություններից մեկն այն է, որ Սարդուրին այս արշավանքի ժամանակ Երիախիում կառուցում է ամրոցներ և Երկիրը վերջնականորեն միացնում Վանի թագավորությանը (23-24): Սարդուրյան տարեգրության **ԿՅՀՀ-241 Ե 25-30 տողերում** Սարդուրին բերում է Փուլուադից և Երիախից գերեվարվածների հանրագումարը՝ 6436 պատանի, 15553 կին, ընդամենը 21989 մարդ, ոմանց արքան սպանել էր, ոմանց ողջ գերեվադել: 31-33 տողերում բերված է նաև հափշտակված անասունների հանրագումարը՝ 1613 ծի, 115 ուղտ, 16529 գլուխ խոշոր, 37685 գլուխ մանր Եղջերավոր անասուն: Այս արշավանքները արքան կազմակերպել էր մեկ տարում:

Սարդուրյան տարեգրության ԿՅՀՀ-241 Ֆ հատվածի հոչակագրից (4-6 տողեր) պարզ է դառնում, որ Եթունի Երկիր կատարած արշավանքից հետո Եթունի Երկրի շնորհիկ արքային հաջողվել էր Ենթակեցնել Կուրիանի Երկրի հարևանությամբ գտնվող Երիախի Երկիրը, որից հետո արքան արշավել էր նույն ուղղության վրա գտնվող Իգանի Երկիրը: Որոշ

պատմաբանների կարծիքով՝ այս դեպքում Երիունին օգնել էր Վանի արքային հպատակեցնելու Երիախի Երկիրը (*ԿՅՀՀ/241*, F, ծան. 21):

Ըստ այս հատվածի՝ Իգանին տեղադրվում է Երիախիից հյուսիսարևմուտքը: Ամենակարևորը Երիախի Երկիրի դաշնակցի հզորության մասին վկայող 35 ամրոցները ավերելու և 200 քաղաքներ այրելու, մարդ, կին այստեղից Բիայնիլի գերելու փաստն է, որ արձանագրում է Սարդուրին (6-10 տողեր): 7-րդ տողից իմանում ենք Երիախիի հզոր դաշնակցի Իգանի Երկիրի արքայի անունը՝ Կապուրե-Կապուրինի: Ապա արքան խոսում է այն մասին (11-13 տողեր), որ նույն ճանապարհով ուղղվել է Բուզունիա Երկիրը և դարձյալ ավերել ամրոցներն ու այրել քաղաքները: Նա հիշատակում է Բուզունիա Երկիր Ալկանիա և Շուդալա քաղաքները: Դեռ վերադառնալու ժամանակ Սարդուրին արշավել էր Երիախի, որտեղ այրել էր քաղաքները, գերեվարել տղամարդկանց և կանանց, սակայն այնտեղից վերադառնալով՝ նա արշավել էր Իշբելուանի, Կաղիահնի, Արունի և Արիլիահնիին Երկրները (14-15):

Ինչ վերաբերում է Իշբելուանի և Կաղիահնի Երկրների տեղադրությանը, ապա Ն.Յարությունյանը դրանք տեղադրում է Երիախիից հարավ-արևմուտքը, Արիլիահնից և Արունիից արևելք և հյուսիս-արևելքը: Սակայն հենվելով F հատվածի 13 տողի վրա, որտեղ արքան ասում է, որ հետ է վերադարձել և նոր արշավել Իշբելուանի ու Կաղիահնի Երկրներ, կարելի է ենթադրել, որ արշավանքի ուղղությունը ոչ թե հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք էր, այլ հակառակը: Այդ դեպքում ճիշտ կլինի Իշբելուանի և Կաղիահնի Երկրները Երիախիից հարավ-արևելք տեղադրել (*Դմայակյան Ա., Շիրակը սեպագիր աղբյուրներում*, էջ 60): Այստեղից արքան նախ կարշավեր Արունի, ապա Արիլիահնի, ինչ հերթականությամբ էլ գրված է տարեգրության 14-15 տողերում, հակառակ դեպքում նա պիտի արշավեր Արիլիահնի ապա Արունի, ինչը չի համապատասխանում արքայի հայտնած Երկրների հերթականությանը, իսկ մենք տարեգրության մյուս հատվածներից իմանում ենք, որ արքան Արունի է հասել՝ նախ գրավելով Արիլիահնիին: Իշբելուանի, Կաղիահնի, Արունի և Արիլիահնիին արշավելուց հետո Արիլիահնիին Երկրում Սարդուրիի գործը հանգստանում և նախապատրաստվում է նոր, Երկար արշավանքի դեպի հյուսիս-արևելքը: Այս Երկրում գործի հանգստանալու փաստը խոսում է այն մասին, որ այս չորս Երկրներն ել վերջնականորեն հպատակվել են Սարդուրիին՝ դառնալով այն կարևոր հենակետը, որտեղից արքան կազմակերպում է իր հեռավոր արշավանքներից մեկը դեպի Սևանա լճի ավագան՝ Վելիքուսի (Վելիքունի) Երկիր: Արքան այս ամենը նաև փաս-

տագրում է 15-16 տողերում: Ըստ Ն.Յարությունյանի թարգմանության՝ նա պատմում է զորքը ջրելու՝ հանգստացնելու մասին՝ շեշտելով այն հանգամանքը, որ կառավարիչներից որևէ մեկը չէր զորակոչվել:

Եթե հիմք ընդունենք ՀՃՊ քրեստոնատիայի քիչ տարբերվող թարգմանությունը՝ «Ես զինվորներին չհանձնեցի ոչ մեկին: Նախկին գավառապետը ապստամբած էր...» (ՀՃՊ քրեստոնատիա, էջ 180), ապա կարելի է ենթադրել, որ արքան ինքն է գլխավորել զորքերը Արիլիանիխի գավառապետի խօսվության պատճառով, իսկ Վելիքունի կատարած արշավանքի հաջողությունը փաստում է նաև Արիլիանիխի նախկին գավառապետի անհաջող խօսվության մասին: Այնուամենայնիվ Սարդուրյան տարեգորության այս հատվածից կարելի է դատել, որ այս տարածքները, արդեն երկար ժամանակ լինելով Վանի թագավորության կազմում, ներկայանում և ընկալվում էին որպես թագավորության բաղադրանասեր՝ գավառներ՝ Վանի արքաների կողմից նշանակված փոխարքաներով, գավառապետով և կառավարիչներով: Բոլորովով այլ է իրադրությունը այս գավառներից հյուսիս ընկած Երիախի և Իգամի երկրներում, որոնց մասին խոսելիս Սարդուրին հիշատակում է այս երկրների արքաներին: 16-28 տողերում Սարդուրին պատմում է Վելիքունի կատարած արշավանքի մասին, որի ընթացքում արքան կրվում գրավել էր 22 ամրոց, ավերել, քաղաքներն այրել, երկիրը միացրել իր երկրին: Սարդուրին F հատվածի 29-31 տողերում բերում է մեկ տարում կատարված այս մեծ արշավանքի ընթացքում թալանված անասնաքանակի և գերեվարվածների հանրագումարը՝ 10000 պատանի, 4600 տղանարդ, 23200 կին, ընդամենը 37800 մարդ: Ունանց արքան սպանել էր, ունանց ողջ տարել: Արքան քշել էր 3500 ձի, 40353 խոշոր եղջերավոր անասուն, 214700 ոչխար: Սարդուրին սույն մեծագործությունները մեկ տարում էր կատարել:

Երիախի անասնապահության մասին սեպագիր ամենավաղ հիշատակությունները կապված են Խորխորյան տարեգորության երկրորդ տարվա հետ (Ք.ա. 785 թ.?), երբ Երիախի երկրից և հյուսիսարևմտյան մյուս ծայրագավառներից Արգիշտի I-ը քշել-տարել էր 1104 ձի, 35015 գլուխ խոշոր և 101829 գլուխ մանր եղջերավոր անասուններ: Ապա՝ 11 տարի անց, (Ք.ա. 774 թ.?), նա կրկին Երիախիի, Մանայի, Եթիունիի և Քարարգայի տարածքներից տարել էր շուրջ 1200 ձի, 29504 գլուխ խոշոր և ավելի քան 60000 գլուխ մանր եղջերավոր անասուններ: Այս մասին ավելի ստուգ տվյալներ է պարունակում Սարդուրյան տարեգորությունը, որտեղ արքան պատմում է այն մասին, որ Երիախի երկրից Բիայնիլի են տարվել այդ երկրի (*niribi didguši*) անասունների հոտերը: Քիչ

Աերքս բերվում են Երիախի և Փուլուաղի Երկրներից տարված անասունների թվերը՝ 1613 ձի, 115 ուղտ, 16529 գլուխ խոշոր և 37685 գլուխ մանր եղջերավոր անասունների: Բնականաբար, շատ դժվար է տարանցատել այս տվյալները իրարից, սակայն ակնհայտ է, որ Երիախիից ոչ մի հատ ուղտ չի տարվել. ուրարտական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս այն, որ հյուսիսային ծայրագավառները ընդհանրապես ուղտաբուծությամբ չեն զբաղվել (*Արյունյան Ի., Յեղածուռ և սկոտօճածու Սարգսյան*, էջ 180): Մեկ ուրիշ անգամ Սարդուրին (Ե 48-50) Երիախիից և Մանայից քշել էր 412 ձի, 6665 գլուխ խոշոր և 25735 գլուխ մանր եղջերավոր անասուն: Սա այն եզակի տեղեկությունն է, որից պատկերացում ենք ստանում Երիախիի անասնապահության մասին: Խորխորյան տարեգրության տասնմեկերրորդ տարում Արգիշտի 1-ը Մանայից տարել էր 170 ձի, 2411 գլուխ խոշոր, 6140 գլուխ մանր եղջերավոր անասուններ: Ն. Զարությունյանը պարզ հաշվարկի միջոցով եզրակացնում է, որ Երիախի Երկրից Սարդուրին տարած կլիներ նոտավորապես 200 ձի, 4000 գլուխ խոշոր, 19000 գլուխ մանր եղջերավոր անասուններ: Երիախի Երկրի անասնապահությունը բավական բարձր մակարդակ է ունեցել: Երկիրը կարող էր մրցակցել այնպիսի նշանավոր անասնապահական կենտրոնի հետ, ինչպիսին էր Մանան: Սարդուրյան տարեգրության *ԿՅԿՀ/241, Ը (43-46)* հատվածում արքան պատմում է, որ Երիախի և Արիլիանիխի Երկրներից տարել է 500 ձի, 8560 գլուխ խոշոր և 25170 գլուխ մանր եղջերավոր անասուն: Սրանք միայն արքայի ռազմավարի տվյալներն են: Արքան պատմում է, որ այն, ինչ տարել են զինվորները, տարել են այն բանից հետո, երբ նա լքել է Երկիրը [իավանաբար Արիլիանիխին-Ի.Ա.]: Այսինքն՝ արքայի հեռանալուց հետո զինվորները շարունակել են թալանը, իսկ Սարդուրին այս մասին ստույգ տվյալներ բերել չեն կարող: Ակնհայտ է, որ Երիախին թալանվել է, քաղաքները՝ ավերվել *Ը (32-34 տողեր)*: Սարդուրյան տարեգրությունը պարունակում է ևս մի տեղեկություն Երիախի Երկրի անասնապահության մասին: Այս դեպքում Երիախին հանդես է գալիս Արաքսի և Սևանի ավագանի բազմաթիվ Երկրների հետ մի շարքում: Այս արշավանքի ժամանակ Սարդուրին տարել է 3500 ձի, 40353 գլուխ խոշոր, 214700 մանր եղջերավոր անասուն: Տարված մանր եղջերավոր անասունների թիվը անգերազանցելի է համարվում, իսկ ավարի մի մասը տարվել էր Երիախի Երկրից: Եթե հաշվի առնենք, որ Արգիշտին Երիախի է արշավել Երկու անգամ, իսկ Սարդուրին՝ ութ անգամ, ապա այդ տասը արշավանքների ընթացքում նրանք առնվազն պիտի գերած լինեին 50000 մարդ, սակայն

հաշվի առնելով Սարիդամիշի արձանագրության մեջ գերիների քանակի վերականգնված թիվը՝ մոտավորապես 18000՝ եզրակացնում ենք, որ Երևակից գերեվարված բնակչության քանակը անհամենատ ավելին պիտի լիներ՝ հասնելով և անցնելով 100000-ը: Նույն սկզբունքով հաշվելով տասը արշավանքների ընթացքում տարած անասնաքանակը՝ մոտավորապես կստանանք 2000 ձի, 40000 գլուխ խոշոր, 190000 գլուխ մանր եղջերավոր անասուն: Հաշվի առնելով այն, որ յուրաքանչյուր ընտանիք կարող էր բաղկացած լինել 6-7 անդամից, ապա յուրաքանչյուր ընտանիքին բաժին էր ընկնում 1-2 ձի, 2-3 խոշոր եղջերավոր և 10-11 մանր եղջերավոր անասուն, ինչը նոտ է իրականությանը: Ինչպես տեսնում ենք, Շիրակը Ք. ա. VIII-VI դդ. ունեցել է բավական զարգացած անասնապահություն, որով և գրավել է ուրարտական արքաների ուշադրությունը:

Մինչև Ք. ա. VIII դ. վերջին տարիները Ուրարտական պետության շատ ծայրագավառներ, մասնավորապես, և Եփունյան իշխանությունները (բացի Կազայից), հարկատու լինելով Կամի արքաներին, հակառիր էին նրանց (*Դմայակյան Ս., Դորոնի թերդաքաղաքը...*, էջ 8): Սարդուրի II-ը (Ք.ա. 763-735 թթ.) դեպի Ուդուրի Եթիունի արշավում է Երկու, իսկ Երիախի՝ ուր անգամ: Այս հականարտության վերջին իրադարձություններից մեկն է Ոուսա I-ի (Ք.ա. 735-714 թթ.) դեմ 730-ական թթ. բարձրացված ապստամբությունը, որին մասնակցում էին նաև Երիախի (Երիանի) և Կուրիանի (Գուրիանի) արքաները: Այս Երկրները, ինչպես հայտնի է, տեղադրվում են Շիրակում: Վճռական ճակատանարտը տեղի է ունենում Սևանա լճի հարավային ափերի մոտ: Եթիունյան իշխանները պարտություն են կրում: Երիախին և Կուրիանին, ինչպես վկայում է «Աշուրիսուայի գեկույցը», կրկին ընդունում են Վանի արքաների գերիշխանությունը (տե՛ս *Երեմյան Ս., Կիմերական ու սկյութական ցեղերի* ..., էջ 91):

Երիախի և Կուրիանի Երկրները՝ Երիախին և Գուրիախին ձևով հիշատակվում են Ոուսա I-ի՝ Ծովինարի արձանագրությունում (*ԿԿՀ/389, CTU I, A 10-2, տե՛ս Salvini M.*, էջ 87), որտեղ արքան խոսում է մեկ տարում 23 արքաների ողջ գերեվարելու մասին: Մեկ արշավանքի ընթացքում Ոուսա Սարդուրորդին նվաճել և ստրկացրել էր Արախտունի, Ուելիքունի, Լուերունի, Արկուկինի Երկրները: Այս արքաներից չորսը ծովի՝ Սևանա լճի այս կողմից էին գերեվարվել (1-5 տողեր): Նույնպես նվաճվել էր Գուրկունելի, Շանասոււահնի, Թերիուիշահնի, Ոիշուահնի, Թարգուահնի, Արիահնի, Զամանի, Իրկիմահնի, Էլահնի, Երիելքուահնի, Այդամանիունի, Գուրիահնի, Ալզիրանի, Պիրուահնի, Շիլահնի, Ուիդուահ-

Աի, Աստեղահնի, Երիահնի, Ազամերունի Երկրոները և գերեվարվել էին 19 արքաներ բարձր լեռներում՝ ծովի այն կողմից (6-12 տողեր): Երիահնիի և Գուրիահնիի արքաները հիշատակվում են այս տասնինը արքաների թվում (10,12 տողեր) (*ԿՅԿՀ/389*): Ընդամենը 23 արքա մեկ տարում<sup>10</sup> ողջ նվաճեցի:

Բիայնական հզորության մասին են վկայում Ծովինարի արձանագրության 14-20 տողերը, որոնցում Ռուսա I-ը (Ք.ա. 735-714թթ.) պատմում է, թե ինչպես տղամարդկանց, կանանց գերեվարել է Բիայնիի և հարկը հավաքելու տարում եկել ու ամրոցներ է կառուցել այստեղ, այս ամենը միացրել իր Երկրին: Կառուցված փառահեղ ամրոցներից մեկը արքան կոչել էր «Թեյշեբա աստծո քաղաք»: Արձանագրության 19-20 տողերում անեծքի բանաձևն է, որը թերի է:

Երիախիի (Երիամի ձևով) և Կուրիահնիի (Գուրիահնի ձևով) մասին վերջին տեղեկություններին հանդիպում ենք այս արձանագրության մեջ (տող 8,11) (*ԿՅԿՀ/389*): Այստեղ էլ Երիախին և Կուրիահնին հիշատակված են Ուրարտուի դեմ մարտնչող հշխանությունների թվում: Ինչ վերաբերում է *Eria-ի/Ериа-ни* (*Խորայելյան Ա.*, էջ 6) ձևերի *ի/ն* վերջավորություններին, ապա այս առումով ուշագրավ է ի. Դյակոնովի՝ հատուկ անունների ձևի մասին այն կարծիքը, ըստ որի՝ նա ուշադրության է արժանացնում հատկապես պետությունների կամ քաղաքների վերջում պարտադիր հանդիպող -ո/ն/ ածանցը: Ի. Դյակոնովը կարծում է, որ այս ածանցը չի պատկանում այլալեզու անվանման, այլ կարելի է համարել ուրարտական դետերմինատիվ ցուցիչ, որը հեշտությամբ կարելի է փոփոխել՝ օգտագործելով *-ի-* ֆորմատիվը, որը ստացական ածական է կազմում (*Պուտրովսկի Բ., Վանսկое царство*, էջ 34): Նա մի շարք պետությունների և քաղաքների անվանումներ տալիս է առանց -ո-, *-ի-*-ածանցի, օրինակ՝ Երեբու-Երեբունիի, Կեխու-Կիեխունիի, Վելիկու-Վելիկունիի փոխարեն (*Պուտրովսկի Բ. Վանսկое царство*, էջ 34): Ելնելով ասվածից՝ կարելի եղարկացնել, որ Երիախի անվան Երիա-ի ուշ ձևը, ստանալով -ո/ ածանցը, Ռուսա I-ի՝ Ծովինարի արձանագրությունում հանդես է գալիս Երիանի ձևով:

Ուսաախնիիից (Վանի հյուսիսարևելյան արվարձան՝ Թոփրաք-կալե) հայտնի Ռուսա II-ի սեպագիր աղյուսակում խոսվում է Իշկուգուլխի Երկրի մասին (*ԿՅԿՀ/412, CTU IV, Tk-1 Ro*): Այյուսակը հայտնաբերվել է Լենան-Զառաւտի և Բելքի կողմից (*Երեմյան Ա., Կիմերակամ ու սկյուրական ցեղերի ...*, էջ 93): Այս տեքստին օրգանապես կապված են Բաս-

<sup>10</sup> «մեկ օրում (արշավանքում) նվաճեցի», ՅԺՊ քրեստոմատիա, էջ 184:

տամից հայտնի *ԿՅԿՀ*- 412a սեպագիր աղյուսակի տեքստն ու Այանի-սից հայտնի *ԿՅԿՀ*- 412b սեպագիր արձանագրությունը, որում Ռուսա II-ը պատմում է Ռուսախմիլի քաղաքի հիմնադրման մասին: Իշկիգուլու-իւ-իշկուգուլխին, լինելով պատմական Շիրակի մասը, հավանաբար Ք.ա. VIII-VI դդ. Լուշա երկրի մասն է կազմել (Թոփրաք-կալեի աղյուսակի բովանդակությունից հայտնի Շագա Իշկիգուլխցու մասին տես՝ *Երես-յան Ս. Կիմերական ու սկյութական ցեղերի* ...էջ 93): Այժմ բերում ենք Ռուսա II-ի (Ք.ա. 685-645 թթ.) սեպագիր աղյուսակի տեքստը՝ Ն.Դարությունյանի թարգմանությամբ. «Այն տարի, երբ Արգիշտորդի Ռուսայի քաղաքից, Շագա՝ դումութարա Իշկուգուլխցին եկավ Մանա երկիրը<sup>11</sup> Ակավայի տեղը, այն ժամանակ, երբ իրեւ արքա Խալդին բնակեցրեց ինձ Ռուսախմիլիում սրբավայրի դիմացը Կիլբանի երկրի»:

Ֆիշտ է 4-6-րդ տողերը թարգմանել. «...այն ժամանակ երբ իրեւ արքա Խալդին բնակեցրեց ինձ Կիլբանիի մոտի Ռուսախմիլիում, տաճառում կար....», որից հետո թվարկվում է ծառայողների, պահակազորի, ներքինիների, պատանիների, ազնվականների քանակը: Յենց այստեղ է, որ իմաստային առունով օգնության են գալիս Բաստամից հայտնի 412a սեպագիր աղյուսակն ու Այանիսի արձանագրությունը: Այանիսի արձանագրությունից պարզ է դաշնում, որ արքան հզոր գործեր է արել Եյդուրու լեռան առջև, հիմնադրել է հոյակապ ամրոց, որը կառուցվել է ամայի անառիկ ժայռի վրա (1-7 տողեր), խաղողի այգի և մրգատու այգի է արքան տնկել և նոր քաղաք այստեղ կառուցել, մեծ քաջագործություններ արել և տվել նրան անուն Ռուսախմիլի (8-11 տողեր): Այս արձանագրությունից մենք իմանում ենք Ռուբարտուի քաղաքական և տնտեսական կյանքում Ռուսախմիլիի կարևորության մասին: Բաստամի սեպագիր աղյուսակից տեղեկանում ենք, որ այն տարի, երբ Ռուսան կառուցել է Ռուսախմիլին, որը գտնվել է Կիլբանի երկրի սրբավայրի առջև, արձակվել են կամ ընդունվել են այս որոշումները՝ կապված Ալավանի երկրի՝ Ռուսայի փոքր քաղաքի հետ: 412a 1-3 տողերում ասված է. «Այն տարի, երբ Արգիշտորդի Ռուսան, զահը հաստատեց Ռուսախմիլի քաղաքում՝ Կիլբանի երկրի առջև: Այս կավե աղյուսակը (աղյուսակները) (*ԿՅԿՀ*412a, ծան. 4, 9) ...ատաղձագործներ: Որոշումները Ռուսայի փոքր քաղաքի Ալավանի երկրի»:

<sup>11</sup> Առանձնահատուկ ուշադրության են արժանի Մանայի թագավորության վարչական միավորումներն ու դրանց տեղադրությունը տարածաշրջանում, Գրելյան Ե., էջ 153-172:

Ի. Ոյակոնովը Թոփրաք-կալեի սեպագիր աղյուսակը համարում է յուրիհնակ և եզակի փաստաթուղթ, որում թվագրությունը կատարվում է ըստ տարվա կարևորագույն դեպքերի, ինչը հակասում է ասորեստանյան անվանադիրների (Էպոնիմ) և ըստ եգիպտական ու խեթական արքաների կառավարման տարիների հիմնան վրա կատարված թվագրմանը: Այս գրելաձևը պահպանվել է մինչև Բաբելական հին թագավորության վերջը (**ՍՊՃ**, էջ 23-24, ծան. 28) և Ք.ա. XVI դ. հետո առաջին անգամ է հանդիպում Ռուսա II-ի՝ Թոփրաք-կալեից հայտնի սեպագիր աղյուսակում: Եթե նման գրելանձը պատահական չէ, ապա երբեք կգտնվի դեպքերի այն սեպագիր ցուցակը, ըստ որի տարվում էր թվագրությունը՝ ժամանակագրական սանդղակը Ռւրարտուում (**ՍՊՃ**, էջ 23-24, ծան. 28): Խորխորյան և Սարդուրյան տարեգրություններում ժամանակագրությունը «գլխավոր հօչակագրում» տարվում է ըստ յուրաքանչյուր տարի կատարված արշավանքների համառոտ նկարագրության, և հնարավոր է, որ այն տարիներին, երբ արշավանքներ չեն եղել, ժամանակագրությունը տարվել է ըստ այդ տարում տեղի ունեցած կարևորագույն այլ դեպքերի (**ՍՊՃ**, էջ 23-24, ծան. 28): Նման գրելանձը պատահական չէ, այլ շարունակական է, ինչպես և մտածում էր Ի. Ոյակոնովը: Բաստամի 412ա սեպագիր աղյուսակը երկրորդն է, որտեղ այն տարում, երբ աղյուսակը գրվել էր, կարևոր իրադարձությունն այն էր, որ արքան գահը տեղափոխել էր Ռուսախինիլի: Ըստ Ս. Զնայակյանի և Լ. Սիմոնյանի նման ժամանակագրությունը ժողովրդական տոմարի դրսնորում է և հաճախ է հանդիպում արձանագրություններում (**Զնայակյան Ս., Սիմոնյան Լ.**, էջ 202-203):

Նախընտրելի է Ռուսա II-ի սեպագիր աղյուսակի՝ Ի. Ոյակոնովի առաջարկած թարգմանությունը: Դամաձայն դրա՝ «Կիլբանի երկրի մոտ սրբավայրից Ռուսախինիլի էին վերաբնակեցրել Խալդ տիրակալին» (**ՍՊՃ**, ծան. 28):

Կիլբանի երկրի դիմաց գտնվող սրբարանից դեպի Ռուսախինիլի (Թոփրաք-կալե) Խալդի աստծոն արձանի վերադարձման (բառացի «թագավոր Խալդի վերաբնակեցման») փաստի մասին, և այս իրադարձության համատեքստում կրկին հիշատակվում է Խշկուգուլսի երկիրը: Սեպագիր տեքստը հաղորդում է նաև նրա թագավորի անունը և մատնանշում, որ վերջինս, հավանաբար վերոհիշյալ դեպքերի կապակցությանը, գնացել է Մանա երկիրը և գրաղեցրել ոմն Աքայայի տեղը (պաշտոնը կամ գահը): Խիստ ուշագրավ այս հաղորդումները թույլ են տալիս Ենթադրել, որ Շիրակի հյուսիսում տեղավորված Խշկիգուլու-Խշկուգուլսի

Երկիրը տևական ժամանակահատվածում Վաճի թագավորության կրոնաքաղաքական ծեռնարկումների անմիջական մասնակիցն է եղել (**Փիլիպոսյան Ա.**, **Կրոնա-քաղաքական...**, էջ 17):

Կրոնաքաղաքական բնույթ կրող այս իրադարձություններից զատ՝ ուրարտագիտության մեջ լուրջ քննարկումների են արժանացել Իշկուգուլիսի երկրի և նրա տիրակալի անվանումները (**ԿՅԿՀ/412**, **Փիլիպոսյան Ա.**, **Կրոնա-քաղաքական...**, էջ 17-18). Ֆ. Քյոնինգը տեքստի այդ տողը վերծանում է. «...*Չագաթարային, Իշկուգուլու երկրի մարդուն...*» ձևով, Գ. Մելիքիշվիլին սկզբում տալիս է «*Չագաթարան՝ Իշկուգուլիսի արքան...*», ապա «*Չագան՝ Իշկուգուլու ավագ որդին...*» ընթերցումները, Ի. Դյակոնովը կարդում է «*Չագան, ավագ որդին Իշկուգուլյան արքային...*», Ղ. Կարագյոյանը՝ «*Չագայորդին հզոր՝ արքան Իշկուգուլուլիսե /ցեղի/ ...*»: Ն. Զարությունյանը վերծանում է այսպես. «/2/ *Չագան՝ որդին ավագ, /երկրի/ Իշկուգուլիսի /3/ Եկավ /երկր/ Մանա...*»: Այս տարբերությունները, ըստ Ա. Փիլիպոսյանի, հիմնականում կապված են Իշկուգուլիսի տիրակալի անունը ներկայացնող սեպախմբի երրորդ նշանի «ա՛շ» կամ «*DUMU*» ընթերցնան հետ (**Փիլիպոսյան Ա.**, **Կրոնա-քաղաքական...**, էջ 17-18): Ի. Դյակոնովը և նրան հետևողները կարծում են, որ այն ավելի նման է «*DUMU*՝ «որդի», գաղափարագրին և ժխտում են «*Չագաշթարա*» ընթերցումը (**ՍՊՃ**, էջ 24, ծան. 28): Այս ենթադրությունը ամրակայելու համար Իշկուգուլու-Իշկուգուլիսի երկրանվան և նրա տիրակալի անձնանվան սկզբնամասում առանձնացվող «*Իշկի/ու-*» և «*Չագա*» հատվածները ներկայացվել են որպես սկյութներին (վերջիններիս երկիրը ասորեստանյան սեպագիր տեքստերում հիշատակվում է «*Iškuzā*» կամ «*Ašguzā*») և սակերին (շագա-սա-կասակ, որից էլ՝ Շակաշեն, Սիսիական) առնչվող ցեղանուններ: Ղ. Կարագյոյանը Իշկուգուլուլիս ցեղի հզոր Չագայորդի արքային համարել է Մովսես Խորենացու Կայպակ-Ակայորդի-Պարույր անձնանվանական շարքի հետ (**Փիլիպոսյան Ա.**, **Կրոնա-քաղաքական...**, էջ 18): Ըստ Ա. Փիլիպոսյանի դիտարկումների՝ վիճելի սեպանշանների մեջ առավել ընդունելի է «ա՛շ» ընթերցումը: Նա սալիկի երկրորդ տողը ընթերցում է «*Ša-ga-aš-tar-a LUGAL Iš-qu-du-ul-hi-e*» «*Չագա-Աշքարան՝ արքան Իշկուգուլյան*» ձևով և մեկնաբանում, որ արքայի անունը կազմված է երկու կից անձնանուններից՝ «*Չագա*» և «*Աշքարա*»: Ա. Փիլիպոսյանը անձնանվան երկրորդ բաղադրիչին մեջ տեսանում է Իշթար դիցուհու անունը: «*Չագա*» բաղադրիչը՝ որպես անձնանուն, դարձյալ վկայված է ք.ա. III-II հազարամյակների մերձավորակելյան արձանագրություններում, թերևս հնդեվրոպական «\*sak’»՝

«աստվածների կամքն իմացող» բառարմատի հետ կապվող և դարձյալ երկնա անձնանուններով կազմված հատուկ անունների բաղադրիչ է: Այս ամենի հիմնան վրա ուսումնասիրողը «Շագա-Աշքարա (Շագա-Իշքար)» ընթերցումը թարգմանում է «Իշքարի աստվածային կամքն իմացող-ավետող»: Չվիճարկելով Իշկիգուլու-Իշկուգուլիսի երկրանվան «Իշկի/ու» հատվածի Աշգուզա-Իշկուզայի հետ ենթադրվելիք կապը՝ Ա. Փիլիպոսյանը բացառում է «Շագա-Աշքարա» անվան առնչությունը «սկյութ» կամ «սակ» ցեղանուններին: Շագա-Աշքարայի հայրենիքը՝ Շիրակի մասը կազմող Իշկիգուլու-Իշկուգուլիսի երկիրը, ուրարտական արձանագրություններում նշշտ հիշատակվում է կրոնաքաղաքական խիստ ուշագրավ ընդհարումների կապակցությամբ:

Շիրակի մասին կարևոր մի տեղեկություն է պահպանվում նաև ասուրաբարելոնյան աղբյուրներում: Դա Ուրարտուում գտնվող ասորեստանյան հետախույզ Աշուրիսուայի գեկուցն է Սարգոն II-ին (ԱՅԻՆ 50.11, Lanfranchi G... /92), որտեղ հիշատակվում է Գամիռա երկիրը, իսկ Գամիռան կիմերների բնակության վայրն էր: Արձանագրության 1-4 տողերում Աշուրիսուան ողջույններ է հղում տիրոջը՝ Սարգոնին: Այս տողերից մենք իմանում ենք, որ նա Սարգոնի ենթականներից է, բառացի՝ «քո ստրուկը Աշուրիսուան», որն անհանգստանում է տիրոջ՝ արքայի բարեկեցության, խաղաղության, տիրոջ՝ արքայի երկրի և Խալծու քաղաքի բարեկեցության համար: 5-6 տողերից իմանում ենք, որ, Գուրիխանիա երկիրը և Խագիու երկիրը Ուրարտու և Գամիրա երկրի միջև են գտնվում: Խագիու երկիրը Ս.Երեմյանը նույնացնում է Նիգ գավառի հետ (Երեմյան Ս., Կիմերական ու սկյուրական ցեղերի ..., էջ 91, ծան. 6):

Ի. Դյակոնովը <sup>mât-na-gi-ú-ն</sup> կարողում է մարզ( ԱՅԻՆ 50.11): Դա՝ Գամիրան հարկ է տալիս ուրարտական արքային (տող 7): Եթե հիմք ընդունենք Երեմյանի առաջադրած կարծիքը, որ Նազիուն երկրի անվանում է, այլ ոչ թե «մարզ» հասարակ անուն «Երկիր» ցուցիչով, ինչպես կարծում է Ի. Դյակոնովը, հետևաբար Գամիրայի հետ Ուրարտուին հարկատու պիտի լիներ նաև Գուրիխանիա երկիրը: Ս.Երեմյանը Գուրիխանիան նույնացնում է Կուլիխանիի կամ Կուրիխանիի հետ: Ապա Աշուրիսուան գրում, որ ուրարտական արքան [Ուլսա I-ինը] արշավել է Գամիրայի դեմ (տող 8-9) ու պարտություն կրել (տող 10-11), որից հետո բոլոր մարդկանց, որոնք այնտեղից էին (տող 12) քշել է դեպի Գուրիխանի: 13-14 տողերում, որոնցից 13-ը թերի է, հետախույզը պատմում է այս տեղահանված մարդկանց մասին, որոնցից ոմանց արքան տարել էր, մյուսներին բռնել, գե-

րեվարել<sup>12</sup>, և հետո Ուրարտուի արքան փախել է իր թշնամիներից<sup>13</sup> (տող 15): Զեկույցի հետեւտագա տողերում Աշուրիսուան հավանաբար պատմում է Ռուսա լ-ի արշավանքից առաջ տեղի ունեցած դեպքերի մասին /<sup>14</sup>/: Ցավոք թերի են 17-18 տողերը, և մենք այդ մասին կրահում ենք զեկույցի հակառակ կողմի վրա գրված ևս 16 տողերից, որոնք մասամբ նույնպես թերի են: Այսպես 3-րդ տողը պարունակում է 8000 զինվորների /<sup>15</sup> մասին տեղեկությունը, հաջորդ տողում նշվում է ձյան առկայության մասին (տող 4), ապա ուրարտական կառավարիչների մասին, ովքեր ապստամբելով արշավել են ուրարտական արքայի դեմ (տող 5-6), կարելի է եզրակացնել, որ այս մարզերի կառավարիչները գործել են ի շահ Խալծու քաղաքի և հետախույզի տիրոց՝ Սարգոնի: Դժվար է ասել՝ որոշակի պայմանավորվածություն ունեցել են նրանք հետախույզի հետ, թե ապստամբել են հետախույզի դրդնամք, բայց չինանալով, որ նա գործում է ի շահ Ասորեստանի (տող 7-10): Ապա Աշուրիսուան գրում է, որ դեպի ուրարտացիների /<sup>16</sup> թիկունք է ուղարկել սուրհանդակների, որոնք հասնելով մինչև թիկունքը լուր են բերել ինչոր զոհի<sup>17</sup> (?) և ուրարտական արքայի մասին (11-14 տողեր), այն մասին, որ Ռուսան Տուրուշպայում է՝ Տուշպա մայրաքաղաքում (15-16 տողեր):

Այսպիսով, Ծիրակի մասը կազմող Երիախի երկիրը և նրան հարևան մյուս Երկրները բիայնական սեպագիր աղբյուրներում բավական հաճախ են հիշատակվում: Ըստ սեպագիր աղբյուրների ուսումնասիրության՝ կարելի է պատկերացում կազմել հյուսիսային ծայրագավառի քաղաքական պատմության, վարչական բաժանման, էթնիկ կազմի, տնտեսության, բնակչության խտության, կրոնի ու պաշտամունքի և նյութական մշակույթի մասին: Մեպագիր և մատենագրական աղբյուրների տեղեկությունները համալրվում են հնագիտական հուշարձանների պեղումներով: Ուրարտական արձանագրությունների ամբողջական տեքստերը և տեքստերի բարգնանությունները բերված են հավելվածում:

<sup>12</sup> Հավանաբար արքան կազմակերպել է երնիկ տեղաշարժեր /<sup>17</sup>/:

<sup>13</sup> Ի. Ղյակոնովը կարդում է. [...] *Ամէլուս-ս[ս.....]* (?) , և Ենթադրում, որ խոսքը մասնագիտության կամ ցեղանվան մասին է, *ԱՅՆԿ, 50.11.*

<sup>14</sup> Աշուրիսուան մյուս զեկույցներում գրում է Ռուսա լ-ի որդու՝ թագաժառանգ Մելարտուայի գահընկեցության և սպանության մասին, ՅժՊ քրեստոմատիա, թիվ 16, էջ 128-129:

**Վանտոսայան արձանագրությունները  
պատմական Ծիրակի մասին**

**Առօհյուղի I, Խորխորյան տարեգրություն, սլումակ | ՍԿՀ-127 I, ԿԿՀ**

**173 I, CTU I, A8-3 I:**

- x+ 1. [<sup>m</sup>Ar-giš-ti-še] a-li-e i-ni [e-di]-ni-e a-z-i-bi-e  
 2. i-na-a-i-n[i] te-ra-[i-e <sup>m</sup>]Ar-giš-ti-še a-li-e  
 3. ha-ti-[a-di] <sup>d</sup>Hal-di-e-[di E]N-di <sup>d</sup>IM-di <sup>d</sup>UTU-di  
 4. a-lu-ú-si-ni-[ni] al-su-ú] -i-ši-ni a-li-i-a-ba-a-di  
 5. i-ku-ka-a-ni MU' ši-[šú]-ha-ni <sup>tú</sup>bu-ra-di-ni-li ú-e-li-du-bi  
 6. uš-ta-di <sup>m</sup>Di-a-ú-e-hi-ni-e-dí LUGÁL <sup>m</sup>Di-a-ú-e-hi LUGÁL-nu du-ú-bi  
 7. ha-ú-bi KURŠe-ri-i-a-zí URU<sup>MES</sup> GIBÚL-bi É.GAL<sup>MES</sup> hár-har-šú-bi ku-ṭe-a-di  
 8. pa-r[i <sup>U</sup>]Pu-ti-e sal-ma-at-hi KURBi-a-ni KURHu-šá-ni 'a-al-du-bi an-da-ni  
 KURTar-i-ú-ni  
 9. uš-ta-a-di KURZa-ba-a-ha-a-e-ú-e e-di-i-a ha-a-ú-bi KURZa-ba-a-ha-a-e-ši-i-li  
 10. ku-ṭe-a-di pa-a-ri-e <sup>URU</sup>Ú-zí-na-bi-tar-na-a pa-ni <sup>sAD0</sup>Si-ri-mu-tar-a <sup>sAD0</sup>ba-ba-ni  
 11. an-da-ni <sup>URU</sup>Ma-qa-al-tú-ni KURl-ga-ni-ni a-al-du-bi ši-a-di <sup>m</sup>E-ri-a-hi-ni-ni-e  
 KUR-ni-e-di  
 12. uš-ta-di <sup>KUR</sup>A-bu -ni-i-e-di ha-ú-bi <sup>URU</sup>Ú-ri-e-i-ú-ni URU LUGÁL-nu-si  
 [<sup>KUR</sup>Ú-i-ṭe-ru-hi-ni-i  
 13. X LIM IX LIM II ME LV ár -še X LIM I ME XL <sup>tú</sup>ZAB<sup>MES</sup> še-e-hi-e-ri-e  
 XX LIM III LIM II ME LXXX <sup>SAL</sup>ú-e-di-i-a-ni  
 14. PAP V a-ti-bi II LIM VI ME LXXXV <sup>tú</sup>ta-ar-łúj-a-ni MU a-li-ki za-āš-gu-bi  
 a-li-ki še-hi-e-ri a-qu-bi  
 15. I LIM I ME IV ANSU.KUR.RA<sup>MES</sup> pa-ru-bi XXX LIM V LIM XV <sup>GUD</sup>pa-hi-ni  
 X a-ti-bi I LIM VIII ME XXIX <sup>UDU</sup>šú-še<sup>MES</sup>  
 16. <sup>m</sup>Ar-giš-ti-še a-li-e <sup>d</sup>Hal-di-a iš-ti-ni-e i-[n]la-ni-l[i] ar-ni-ú-ši-ni-li I MU za-du-bi  
 17. <sup>d</sup>Hal-di-i-ni uš-ta-bi ma-si-ni-e <sup>Giš</sup>šú-ri-e ka-ru-ni <sup>m</sup>A-bi-li-i-a-ni-e-hi KURe-ba-ni-e  
 18. KURA-ni-iš-[t]e? -er-ga -e <sup>m</sup>Qu-ár -za-ni-i-ni <sup>m</sup>Ul-tú-za-i-ni KUR-ni-e te-qu-a-li  
<sup>m</sup>Ar-giš-ti-ka-i  
 19. <sup>d</sup>Hal-di-i ku-ru-ni <sup>d</sup>Hal-di-ni <sup>Giš</sup>šú-ri-i ku-ru-ni <sup>d</sup>Hal-di-i-ni-ni al-su-ú-i-ši-ni  
 20. uš-ta-bi <sup>m</sup>Ar-giš-ti-i-ni <sup>m</sup>Me-nu-ú-a-hi <sup>d</sup>Hal-di-i-ni ú-lu-[uš-ta]-a-i-bi  
 21. <sup>m</sup>Ar-giš-ti-še <sup>f</sup>al-li-e ha-ú-bi KURE-t[i]ú-ni-ni ku-ṭe-a-[d]i pa-ri-e  
 KURl[š?-qi-gu-lu] -ú-e  
 22. pa-ri <sup>m</sup>Ú-du-ri KURE-ti-ú-hi-ni 'a-še <sup>SAL</sup>lu-tú pa-ru-bi  
 23. bu-ti-a-di <sup>d</sup>Hal-di-e-di EN-[di] <sup>d</sup>IM-di <sup>d</sup>UTU-di a-lu-si -ni-ni al-[su-i-ši-ni]  
 24. a-li-a-ba-a-di i-ku-ka-a-ni [šáj]-[a]-li-e uš-ta-a-di KURÚ-me(?)-lu -[e-di]  
 25. ha-a-ú-bi KURUr-ja-ni KURtè-er-t[?] -bi ha-a-ú-bi <sup>m</sup>Mu-ru-zu [...]  
 26. ga(?) -ri-ni qar-bi a-gu-nu-ni ma-[nu] gu-nu-šá-a ha-ú-bi 'a-še <sup>SAL</sup>[lu-tú  
 pa-ru-bi ]  
 27. [h]a-a-ú-bi <sup>URU</sup>Ú-ba-a-ru-gi-il-du-ú] -[ni URU] LUGÁL-nu-[si .....]  
 28. [ku-ṭ]e-a-di pa-ri KURKu -[...]-ru-pi-ra pa-ri KURTar-ra-[ba?]  
 29. [uš-ta-dj]i <sup>URU</sup>Id-k[u]-a-ú-ni-e-di <sup>N</sup>a-[a?] ...]  
 30. 'a-še <sup>SAL</sup>ú-e-di-a-[ni iš-ti-ni-ni pa-ru-bi]  
 31. ha-a-ú-bi KURIr-ki-[ú-ni ...]  
 32. ku-ú-ṭe-a-d[i pa-ri ...]  
 33. uš-ta-di <sup>KUR</sup>Ar-tar-mu-[e-di]  
 34. gu-nu-ši-ni-i-e su-[ú-i-du-lu-ú-bi]  
 35. URU<sup>MES</sup> [hár-har-šú-bi]  
 36. ku-ṭe-a-[di pa-ri ...]  
 37. pa-a-ri [...]  
 38. VII(?) [LIM ..... ár-še ]<sup>MES</sup>  
 39. XI LIM [..... <sup>SAL</sup>]ú-e-di-a-ni

40. PAP XX LIM II ME LXXIX ւ.՝ ՈՒԿՈՄԵՏ MU  
 41. a-li-ki za-աš-gu-bi  
 42. a-li-ki še-ի-ri  
 43. a-gu-bi-e

(x+1-2) Արգիշտին ասում է.-Սա աստվածային օրենքի (?) համար է դրված:

Արգիշտին ասում է. (3) -Աղաչեցի Խալդի տիրոջը, Թեյշեբային, Շիվի-նիին, (4) Իշխանական մեծությամբ, որի վերևուն (լսուն էին ինձ աստ-վածները):

(5) Այդ նույն տարում երրորդ անգամ<sup>15</sup> զինվորներ գնդեցի, (6) արշա-վեցի Դիառլիսի (ցեղի) վրա: Արքային Դիառլիսի (ցեղի) հպատակեցրի (?) , (7) գրավեցի Շերիազի (Երկիրը), քաղաքները այրեցի, ամրոցները ավերեցի: Կտրում էի (8) մինչև Բուրի (քաղաքը): Բուն (?) Բիանի, (և) Խուշանի (Երկրները), անջատեցի (?) ամբողջը (?) Թարիունի (Երկրից):

(9) Արշավեցի Զարախս (Երկրի) վրա, գրավեցի Զարախս (Երկրի) գավառը (?): (10) Կտրում էի մինչև Ուզինաբիթարնա (քաղաքը), մինչև Սիրիմութարա լեռը: (11) Ամբողջը (?) Մակալրունի (քաղաքը) Իգանի (Երկրից) անջատեցի (?): Եւա Էրիախսի Երկրի վրա:

(12) Արշավեցի Աբունի (Երկրի) վրա, գրավեցի Ուրեյունի քաղաքն արքայական Վիտերուլիսի (Երկրի):

(13) 19225 պատաճի (քշեցի), 10140 զինվոր Երիտասարդ, 23280 ստրկուլիի (?), (14) ընդամենը 52675 մարդ (մեկ) տարում: Ոնանց սպա-նեցի, ոնանց ողջ տարա:

(15) 1104 ձի քշեցի, 35015 խոշոր Եղջերավոր անասուն, 101829 ոչ-խար:

(16) Արգիշտին ասում է. -Խալդիի փոխարեն (?) սույն մեծագործութ-յունները մեկ տարում կատարեցի:

(17) Խալդին արշավեց, սեփական զենքին (?) Եմբարկեց Արիլիա-նի(իսի) (ցեղի) Երկիրը, (18) Անիշթերգա (Երկիրը), Կուարզանի (ցեղի) (Երկիրը), Ուլքուզահնի (ցեղի) (Երկիրը), զգետնեց նրանց Արգիշտիի առջև: (19) Խալդին ին զորեղ (է), Խալդյան զենքն (?) ին զորեղ (է): Խալդյան մեծությամբ (20) արշավեց Արգիշտի Սինուայորդին: Խալդին առաջնորդում (?) էր (նրան):

<sup>15</sup> Ըստ ԿԿՀ-ի՝ «կրկին»:

(21) Արգիշտին ասում է. -Գրավեցի Եթունի (Երկիրը), հասա մինչև Իշկիգուլու (?) (Երկիրը), (22) մինչև Ուղուրի (ցեղը) Եթունի (Երկրի), մարդ, կին քշեցի:

(23) Աղոթում էի Խալդի տիրոջը, Թեյշեբային, Շիվինիին՝ իշխանական մեծությամբ, որի Վերևում (24) (լսում էին ինձ աստվածները)<sup>16</sup>: Նույն տարում արշավեցի Ումելունի (?) (Երկրի) վրա, (25) գրավեցի Ուրյանի (Երկիրը), Երկիրը Տերտուրի (?) (Երկիրը), նվաճեցի Մուրուզու (ցեղի) (Երկիրը): (26) «Մարե»-ական<sup>17</sup> ժայռը (?), (որ) ամրացված էր, կովում գրավեցի, մարդ, կին քշեցի: (27) Գրավեցի Ուրարուգիլդունի) քաղաքն արքայական (Երկրի) [...]: (28) Կտրում էի մինչև (Երկիրը) քուրուփիրա (Երկիրը), մինչև Թառը(ա)քա (Երկիրը) [...]:

(29) Արշավեցի, Վերադարձա զորությամբ Իղուառունի (Երկրի) վրա (...), (30) Մարդ, կին այստեղից քշեցի, (31) նվաճեցի (Երկիրը) Իղօրուառունի, (32) հասա մինչև... (33) Գնացի (Երկիրը) Արտարմու, (34) զորքը եւ շպրտեցի, (35) քաղաքները ավերեցի, (36) Կտրում էի մինչև [...] , (37) մինչև [...]:

(38) 8 հազար (?) [...] պատանի, (39) 11 հազար [...] կին, (40) ընդամենը 20279 մարդ (մեկ) տարում: (41) Ոնանց սպանեցի, (42) ոնանց ողջ (43) տարա:

## Արգիշտի I, Խորխորյան տարեգրություն II այունակ ԿԿՀ-127 II , ԿԿՀ 173 II, CTU I, A8-3 II:

1. I LIM II M[E] LXXX [... ANŠU.KUR.RA<sup>MEŠ</sup> pa-ru-bi ... <sup>GUD</sup>pa]-bi-ni<sup>MEŠ</sup>
2. XII a-ti-bi VI LI[M ... <sup>UDU</sup>sú-še<sup>MEŠ</sup> <sup>m</sup>Ar-giš-ti-še a-li-e ]
3. <sup>d</sup>Hal-di-a iš-ṭi-ni-e] i]-[na-ni-li ar-ni-ú-ši-ni-li I MU za-dju -bi
4. <sup>m</sup>Ar-gi-iš -ti-ni [LUGÁL] DAN.[NU LUGÁL al-su-i-ni a-lu-si <sup>URU</sup>ṭu-uš-pa-e] URU-[e]

(1) 1280 [...] ծի քշեցի, [...] խոշոր Եղերավոր անասուն, (2) 126 հազար [...] ոչխար:

Արգիշտին ասում է. (3) -Խալդիի համար (?) սույն մեծագործությունները մեկ տարում կատարեցի: (4) Արգիշտին արքա (է) հզոր, արքա մեծ, արքա Բիայնիլի (Երկրի), իշխանը Տուշպա քաղաքի:

<sup>16</sup> Ըստ ՅժՊ քրեստոնմատիայի h. 1, էջ 162:

<sup>17</sup> Ըստ ԿԿՀ-ի՝ «ամրոցը (?) ժայռի վրա (?) ամրացված էր»...

Արգիշտի I, Խորխորյան տարեգրություն, սյունակ V ԿԿՀ-127 V, ԿԿՀ  
173 V, CTU I, A8-3 V:

33. <sup>d</sup>Hal-di-ni uš-ta-bi ma-si-ni-e <sup>ḠS</sup>sú-ri-i-[e]  
 34. ka-ru-ni <sup>KUR</sup>Ma-na-ni KUR-ni-e ka-ru-ni <sup>KUR</sup>E-ti-ú-ni  
 35. te-e-qu-ú-a-li-e <sup>m</sup>Ar-gi-iš-ti-i-ka-a-[ji]  
 36. <sup>d</sup>Hal-di-i ku-ru-ni <sup>d</sup>[Hal-d]i-ni-ni al-su-i-ši-[ni]  
 37. <sup>m</sup>Ar-gi-iš-ti-še <sup>m</sup>Me-n[u]-a-ḥi-ni-e-še a-li-[e]  
 38. uš-ta-di <sup>KUR</sup>Ma-na-i-d[i] KUR-ni a-tú-bi URU<sup>MES</sup> GIBÍL-[bi]  
 39. <sup>URU</sup>Si-me -ri-ḥa-di-ri-ni URU LUGÁL-nu-si a-gu-nu-ni [ma-nu]  
 40. gu-nu-šá-a ḥa-ú-bi 'a-še <sup>SAL</sup>lu-tú iš-ti-ni-ni pa-[ru-bi]  
 41. <sup>m</sup>Ar-giš-ti-še a-li-e ḥa-šú-bi <sup>KUR</sup>E-ti-ú-ni-[ni]  
 42. <sup>URU</sup>Ar-di-ni-e-i áš-ti-ú-zí ir-bi-la-[ni]  
 43. i-ku-ka-ni MU ši-šú-ḥa-ni <sup>LÚ</sup>A.SI<sup>[MES]</sup> ú-e-li-du-[bi]  
 44. ḥu-ti-a-di <sup>d</sup>Hal-di-e-di EN-di <sup>d</sup>IM-di <sup>d</sup>UTU-[di]  
 45. DINGIR<sup>MES</sup>-áš-te <sup>[KUR]</sup>Bi-a-i-na-a -áš-te a-lu-si-i -ni-[ni]  
 46. al-su-i-ši-ni a-li-a-ba-di ḥa-ši-al-me DINGIR<sup>[MES]</sup>  
 47. uš-ta-di <sup>KUR</sup>E-ti-i-ú-ni-i-e-di ḥa-a-ú]-[bi]  
 48. <sup>m</sup>E-ri-a-ḥi KUR-ni-e <sup>m</sup>Ka-tar-za-a-e KUR-[ni-e]  
 49. ku-ṭè-i-a-di pa-a-ri-e <sup>KUR</sup>š-qí-gu-lu-[ú]  
 50. 'a-še <sup>SAL</sup>lu-[tú] ši-ú-bi <sup>KUR</sup>Bi-i-a-i-na-a-[ji-di]  
 51. <sup>m</sup>Ar-giš-ti-[še a]-li-e <sup>d</sup>Hal-di-[ni-ni al-su-i-ši-ni]  
 52. uš-ta-a-di <sup>KUR</sup>Ú-i-ṭè-ru-[ḥi-ni]-e-[i]  
 53. <sup>KUR</sup>[e-ba-ni-e-di KUR]-ni a-tú-bi URU<sup>MES</sup> [GIBÍL]-bi  
 54. ['a-še <sup>SAL</sup>lu-tú iš-ti-ni-ni ši]-ú-bi<sup>23</sup> <sup>URU</sup>A-me-gu(?)-[...]  
 55. [..... <sup>KUR</sup>]Ú-i-ṭè-ru-[ḥi] .....  
 56. a-še(?) [.....]-nu-ni [..... ár-še<sup>MES</sup>?] na-[ḥu-bi?]  
 57. DUB-[te te]-ru-[ú]-bi [.....]  
 58. pi-[i]-ni [.....] ú [.....] ri [..... URU ]  
 59. LUGÁL-nu-si [.....] me-e-i [.....]  
 60. bi-du-ji[a-še .....] li a [.....]  
 61. [.....]  
 62. [.....] me(?) e ni [.....]  
 63. [.....]  
 64. [.....] <sup>MES</sup> e(?) [...]  
 65. [a-li-ki za-áš-gu-bi a]-li-ki še-ḥi-ri [a-gu-bi]  
 66. I LIM II [ME ... ANŠU.KUR.RA]<sup>MES</sup> XX LIM IX LIM

## V ME IV [<sup>GUD</sup>pa-*hi*-ni]

67. VI a-ti-[bi .....] <sup>UDUŠÚ-šé<sup>MES</sup></sup> pa-[ru-bi]  
 68. <sup>m</sup>Ar-giš-[ti-še a-li]-e <sup>[d]</sup>Hal-di-a iš-[ti-ni-e]  
 69. i-na-ni-li [ar]-ni-ú-ši-[ni]-li I MU za-[du-bi]

(33) Խալդին արշավեց, սեփական գենքին (?) (34) Ենթարկեց Սանա Երկիրը, Ենթարկեց Եթունի (Երկիրը), (35) զգետնեց նրանց Արգիշտիի առջև :

(36) Խալդին ին զորեղ (t): Խալդյան մեծությամբ (37) Արգիշտի Սինուայորդին ասում է. (38) -Արշավեցի Սանա (Երկրի) վրա, Երկիրը կերա (յուրացրի), քաղաքները այրեցի: (39) Շիմերիխանդիրի քաղաքն արքայական, (որ) ամրացված էր, (40) կռվում գրավեցի, մարդ, կին այստեղից քշեցի: (41) Արգիշտին ասում է.- Լսեցի, (որ) Եթունի (Երկիրը), (42) Արդինի (քաղաքի) «աշտիուզին» հափշտակել է: (43) Յենց այդ նույն տարում Երրորդ անգամ (?) զորք գնեցի: (44) Աղրորում էի Խալդի տիրոջը, Թեյշերային, Շիվինիին և (45) աստվածներին Բիայնիլի (Երկրի): Իշխանական (46) մեծությամբ, որի վերևում լսում էին ինձ աստվածները:

(47) Արշավեցի Եթունի (Երկրի) վրա, գրավեցի (48) Էրիախի (ցեղի) Երկիրը, Քաթարզա (ցեղի) Երկիրը, (49) կտրում էի մինչև Իշկիգուլու (Երկիրը): (50) Մարդ, կին հանեցի դեպի Բիայնիլի (Երկիրը):

(51) Արգիշտին ասում է.- Խալդյան մեծությամբ (52) արշավեցի Ուիտերուխի (53) (Երկրի) վրա, Երկիրը կերա (յուրացրի), քաղաքները այրեցի: (54) Մարդ, կին այստեղից հանեցի: (55)<sup>18</sup> Ամեգու քաղաքն արքայական Ուիտերուխի (Երկրի), (որ) ամրացված էր, կռվում գրավեցի: (56) Երբ (?)..., պատահներին(?) (ես) տարա: (57) Արձանագրություն դրեցի [...]: (58) տակ [...], (59) քաղաք արքայական, [...] (60) Վերադարձին [...]: (61-64)... (65) Ոմանց սպանեցի, ոմանց ողջ տարա:

(66) 1200 [...] ձի, 29504 խոշոր Եղջերավոր անասուն, (67) 60 հազար [...] ոչխարի քշեցի:

(68) Արգիշտին ասում է: Խալդիի համար (?) (69) սույն մեծագործությունները մեկ տարում կատարեցի:

<sup>18</sup> Ըստ ՀժՊ քրեստոմատիայի հ. 1, էջ 168:

Արգիշտի I, Վան, ԿԿՀ-128 B1, ԿԿՀ 174 B1, CTU I, A8-2 Vo:

27. [dH]al-di-ni uš-ta-bi ma-si-ni-e <sup>GIŠ</sup>sú-ri-i-e]
  28. [ka]-ru-ú-ni <sup>KUR</sup>E-ti-ú-ni-ni te-e-qu-ú-ni
  29. [<sup>m</sup>A]r-gi-iš-ti-i-ka-i <sup>d</sup>Hal-di-i ku-ru-ni
  30. [<sup>d</sup>Hal]-di-ni <sup>GIŠ</sup>sú-ri-i ku-ru-ni <sup>d</sup>Hal-di-ni-ni
  31. [uš-m]a -a-ši-ni uš-ta-a-bi <sup>m</sup>Ar-gi-iš-ti-ni
  32. [<sup>m</sup>Me-n]u-ú-a-ḥi ú-lu-uš-ta-i-bi <sup>d</sup>Hal-di-ni
  33. [<sup>m</sup>A]r-gi-iš-ti-še a-li-e a-li-e-li LUGÁL <sup>MEŠ</sup>
  34. [a]r-nu-i-a-li <sup>m</sup>Di-a-ú-ḥi-ni-e ši-ši-ni MU
  35. [ḥa]-ú-bi <sup>KUR</sup>Lu-šá-e KUR-ni-e <sup>KUR</sup>Ka-tar-za-e KUR-ni-e]
  36. [<sup>m</sup>] {E-ri-a-ḥi KUR-ni-e <sup>KUR</sup>Gu-lu-ta-a-ḥi ḥa-ú-[bi]}
  37. [KUR] {Ú -i-ṭe-e-ru-ḥi-i-ni-e-i <sup>KUR</sup>e-ba-[a-ni}
  38. [ku-ṭu]-bi pa-ri <sup>KUR</sup>A-bu-ni-i-e LUGÁL <sup>KUR</sup>Lu-šá-[a-e]
  39. [ú-e] -di-a-du-bi <sup>KUR</sup>I-ga-a-e bu-ra áš-[tú-bi]
  40. [e-er-ṣ]i-du-bi e-si me-še <sup>m</sup>Ar-gi-iš-ti-e a-[ru-ni]
- 

(27) Խալդին արշավեց, սեփական զենքին (28) Ենթարկեց Եթումի (Երկիրը), զգեստնեց (29) Արգիշտիի առջև: Խալդին զորեղ է, (30) Խալդյան զենքն (?) իմ զորեղ (է): Խալդյան (31) զորությամբ արշավեց Արգիշտին, (32) Մինուայորդին, Խալդին առաջնորդում էր (?) «նրան»:

(33) Արգիշտին ասում է.- Արքաները, որոնք (34) Եկան օգնության Դիառլիսիի (արքային) երեք (?) տարի (անընդմեջ), (35) նվաճեցի (Ես) Լուշա Երկիրը, Քաթարզա Երկիրը, (36) Երկիրը Երիախի (ցեղի), Գուլութախի (Երկիրը), գրավեցի (37) Ուխտերուխի Երկիրը, (38) հասա Աբունի (Երկիրը), Լուշա (Երկրի) արքային (39) ամորձատեցի, Իգանի (Երկրի) (արքային) ստրկացրի, (40) թողեցի տեղում, հարկ Արգիշտի (արքային) (նա) տվեց:

**Արգիշտի I, Յանակ (Օռթաքենո), ԿΥԿԻ 174 C, CTU I, A8-7:**

1. [<sup>d</sup>Hal-di-ni uš-ta]-bi ma-si-ni šú-ri ka-ru-ni <sup>KUR</sup>Tar-i-ú-ni KUR(!) ka-r[u-ni]
  2. [<sup>KUR</sup>..... tje-qu-ni <sup>m</sup>Ar-gi-iš-ti-i-ka-i <sup>d</sup>Hal-di ku-ru-ni
  3. [<sup>d</sup>Hal-di-ni šú-ri ku-ru-ni] uš-ta-bi <sup>m</sup>Ar-gi-iš-ti-ni <sup>m</sup>Me-nu-a-ḥi ú-lu-[uš-ta -bi]
  4. [<sup>d</sup>Hal-di-ni] <sup>m</sup>Ar-gi-iš-ti-še a-li ḥa-ú-bi <sup>KUR</sup>Tar-a-i-ú-ši-li a-šá-a-[di]
  5. [i-ni ḥa-a-ri]-ni-e ku-ṭe -a-di pa-ri <sup>KUR</sup>Ḥu-šá-ú-e pa-ri <sup>KUR</sup>Bi-i-a-ú-e ši-a-[di]
  6. [<sup>KUR</sup>] Aš-qa-la-ši-e-di <sup>d</sup>Hal-di-ni-ni ba-ú-ši-ni <sup>m</sup>Ar-gi-iš-ti-še a-[li-e]
  7. [LUGÁL <sup>m</sup>] Di-ja-ú-e-ḥi a(?)-ri-bi e-ri-da-bi ka-i-u-ki <sup>URU</sup>A-ḥu-ri-a a-su-[ni]
  8. [gu-nu-ši-ni] su-ú-i-du-lu-bi za-[āš-gu-bi?] <sup>URU</sup>Qa-[....]-ú-ni a-su-ni za-[du-bi LÚ-tú-ḥi?]
  9. [iš-t]-i-ni LXX LIM II LIM LXXX ár(!)-še VII LIM [<sup>U</sup>ŪKU<sup>MES</sup>?] XI [LIM? ... a-li]-ki za-áš-gu-bi]
  10. [a]-li-ki TI<sup>MES</sup> [a-gu-bi] VI É.GAL<sup>MES</sup> [ḥar-ḥar-šú-ú-bi] L [URU<sup>MES</sup>] a-ma-āš-tú-bi[i]
  11. [<sup>m</sup>Ar-gi-iš-ti-ni] [<sup>m</sup>Me-n]u-[a-ḥi] LUGÁL DAN.NU LUGÁL <sup>KUR</sup>Bi-a]-n[a]-e a-lu-si <sup>URU</sup>Tu- uš-p[a URU]
  12. [a]-lu-še i-ni DU[B-t]e tu(?) -li-e t[ú-ri-ni]-ni <sup>d</sup>Hal-di-še <sup>d</sup>Qu-e-ra-a
  13. ma-a-[ni] <sup>d</sup>UTU-ni pi-i-ni [me]-i ar-ḥi ú-ru-li-[a -ni]
- 

(1) Խալդին արշավեց, սեփական զենքին ենթարկեց Թարիունի Երկիրը, հպատակեցրեց (2) (Երկիրը)..., զգեստնեց Արգիշտիի առջև: Խալդին զորեղ է (?), (3) Խալդյան զենքն (?) ին զորեղ (է): Արշավեց Արգիշտի Մինուայորդին, առաջնորդում էր (4) Խալդին:

Արգիշտին ասում է.- Նվաճեցի քարիունցիների (Երկիրը), գնացի (5) այդ ճանապարհով, հասա խուշանացիների (Երկիրը), (Երկիրը) բիայցիների, եկա (6) Աշկալաշի (Երկիրը):

...Խալդյան իրամանով Արգիշտին ասում է.- (7) Արքան Դիառլիսի (ցեղի) aribi Ելավ առջևն ին Ախուրիա(նի) (քաղաքի) մարզում. (8) Զորքը (?) ետ շպրտեցի, ավերեցի Կա[...]ունի մարզի (քաղաքները): Ավար արեցի (?) (9) այստեղ. 72 հազար 80 պատանի, 7 հազար[...մարդ ?], 11[հազար ?...]. Մի մասին սպանեցի, (10) մի մասին ողջ տարա: 6 ամբոց ավերեցի և 50 քաղաք այրեցի:

(11) Արգիշտին, Մինուայորդին,- արքա հզոր, արքա (Երկրի) Բիայնի-լի, կառավարիչ Տուշպա քաղաքի:

(12) Ով այս արձանագրությունը ոչնչացնի, թող ոչնչացնեն Խալդին, Կուեռան (13) նրան արկի տակ...

Արգիշտի I, Վան, ԿԿՀ-129 a,b, ԿԿՀ 175 a,b, CTU I, A8-4, A8-5:

a

- x + 1. i?] -bi-[r]a-a-[ni? ...  
2. k]a -a-di <sup>KUR</sup>[...  
3. <sup>KUR</sup>]E-ti-ú-n[i ...  
4. sal]-ma-at-ḥi k[a -...  
5. <sup>KUR</sup>]E-ti-ú-ni [...  
6. nu?-n]a-[a]-bi ka-[ú-ki? ...  
7. ..... r]a(?) -a- [...

b

- x + 1. ...]-še {...  
2. <sup>KUR</sup>Gu-lu-ta-ḥi <sup>KUR</sup>Bu -[...  
3. <sup>KUR</sup>A-ni-š-te-er-ga-[e .... <sup>mA</sup>]r-gi-šš-ti -[še a-li-e]  
4. ḥu-ti-a-di <sup>d</sup>Hal-di-e-[di] EN-[di] <sup>d</sup>[IM-d]i <sup>d</sup>[UTU-di]  
5. [a-lu-[si-ni-ni al-su-i-ši-ni a-li-a-ba-di i-ku-ka-ni MU]  
6. [uš-ta-di <sup>KUR</sup> ..... ]

Արձանագրությունը թերի է, սակայն պահպանված ընդհանուր բովանդակությունից պարզ է դառնում, որ խոսքը եթիւնի խոշոր պատմաշխարհագրական միավորի դեմ տարած հաղթանակի մասին է, որի կազմի մեջ էին մտնում պատմական Շիրակի վարչական մասը կազմող գուլութախին և Անիշթերգան:

Արգիշտի I, Սարիղամիշի արձանագրություն<sup>19</sup>, ԿԿՀ-130, ԿԿՀ 176,  
CTU I, A8-6:

1. [<sup>m</sup>Ar-gi-iš-ti-še <sup>m</sup>Me-nu-ú-a-ḥi-ni-še]
2. [a-l]i ḥa-ú-bi <sup>URU</sup>A-ḥu-ri-a-ni
3. <sup>m</sup> Áš-tu-ḥi -ni-e-i] KUR-ni-ni
4. ši-a-di(?) [...]
5. <sup>m</sup>Áš-tu-ú(?) -ḥi-ni-i-e ḥa-ú-bi
6. [<sup>KUR</sup>] E-ti-ú-ni-ni i-bi-ra-ni
7. [nu] -na-a-li DAN .NU-i  
<sup>U</sup>A.SI<sup>MEŠ</sup>-n[i]
